You, however, are ancient but energetic,
You are trailing smoke, but also a fire,
You are equally gallant and simple,
You are amongst many, but the state owns you,
And thus you are necessary
To the state that in the future
Will watch itself from the Moon and Mars...

“And a Man Called Mashdots”

(Excerpts)

Our land was divided
Like the warm heart of a sacrificed bull-calf
And was forcefully placed
On two burning sharp skewers,
One held on the fire by Persians
And the other by the insidious Byzantines.

We had become a colony for foreigners
On our Land,
Under our sky.
To even prostrate before our Father
Or to kiss the Son
We should have asked permission from an alien royal court
Which, had it been granted,
We should have considered a grace
And be grateful forever.

We had no right to sing our song,
Which, for centuries past,
Had resonated with our golden language;
We had no right to also play
Neither the lute,
Nor the castanets.

And what was left?
Nothing was left
But prayer.

And it was at that moment, that he
A man called Mesrob Mashdots
Came to this world.

They sleep amongst the people
As an awful steam in the water;

They are born from somewhat a genius fatigue
To become genius.
They are born to prove
That the end somewhere turns into beginning.
They are born to prove
That there is no miracle,
Rather only need.
They are born to prove
That the feat of arms begins only
Where all the means come to an end...

And thus was born one of them,
He was born
A man named Mashdots.
And he was born not to increase
The endless number of inquirers.
He came to this world to answer,
And he indeed found the answer...

Yes, we existed before him.
But he was born
To come and become a beginning.
Yes, we existed before him,
We had bread, whether more or less,
And we had water.
But he was born to become nourishment.

He was born that we may give birth,
He existed that we may exist,
And he became immortal
That we may become immortal...

He tempered and forged our identity
Against the devouring fire of the foreigners
As great as the threatening danger
And even more enormous than the danger.
He placed a yogurt culture against the tempered milk,

A wing against the quantity,
A flight against the number,
Ink against blood,
Pen against the sword,
And a repository of books against an ambush.

Always enduring strikes and attacks,
Even losing before ferocious armies,
In life we defeated the cruelest of all—
We defeated the brutal times.
Though buried in the soil cubit after cubit,
We rose up again,
We remained steady;
Though falling endlessly,
We flew again;
Though dying endlessly,
We perpetuated...
And now, it is not that we are being excavated,
Rather we are excavating;
Not that we are being remembered,
Rather we are recollecting;
Not that we are being witnessed,
Rather we are the witnesses,
Reaching other times
At a time when, though having always suffered from quantities,
We are proud of our new quality.

What would you call him after all of these
On our terribly winding road:
A sign,
A pillar,
A pole,
Or an inventor of letters?

And should one recollect alphabet and letters,
He himself is the capital letter
With whom the common and simple word

Grow up to become a symbol
And... the man stretches to become a MAN
While the Armenian... [becomes] Mashdots.

* * *

VAHAKN TAVTIAN

Armenian Language

My mother tongue, my language, I have created you with fire
And have delivered you to the centuries like a sacred fire.

I have lit your red flame up the reed's tube
That you may birth gods with fiery beards and hair.

And I have lit you in maternal clay-plastered cottages
That you may stretch forever with the smoke of the chimney...

My mother tongue, my language, I have created you with bread
And have delivered you to the centuries like sacred bread.

I have given you the taste of the wheat that I have squeezed
from the stone
That you may be inconsumable like that blessed bread.

That on the distant roads of estrangement and hunger
You approach my lips like a communal wafer.

My mother tongue, my language, I have created you with wine
And have delivered you to the centuries like a sacred wine.

And intoxicated by you, I have become complaint and protest,
I have revolted against the merciless thrones of heaven.

With you I have kneaded my soul's light and darkness,
And conversed with the universe, the unknown, and eternity.

My mother tongue, my language! Whatever happens in the
world
You'll remain my fire, my bread, and my sacred wine.

* * *

Our Alphabet

Our letters were born from a vision,
Our letters were nourished with winds,
They were tempered to become iron letters,
Our letters were written on the stones,
When an attempt was made to erase or alter them
Our letters struck like thunderbolts...

* * *

KEVORK EMIN

Our Alphabet

This is not an alphabet,
This is an inaccessible fortress,
Unconquerable treasure,
A gate for salvation,
An exit, when there is no hope,
A tune of renaissance.
It is our essence,
Our pace and our path,
Our crown and general,
A call for gathering,
A wise advice,
A means to exist.
It is the anchor of a ship,
The tree of literature,
The seal of identity,
The daily bread
for the Armenian table,
The vine press for skills.

It is the resonance of a song,
the stirring of a motion,
The academy of oration,
The gym of minds,
the tome of faith,
The oil for an ever-burning torch.
It is our first foundation,
The beam of our hope,
Our skilled spirit,
Our orchard's plane tree,
The fortifying wall of our house
The lawful watermill...
It is the cannonball of our fight,
the nostril of instinct,
the pioneer of glory,
Our love and heart,
our ever-blooming seed,
A rock and inscription.
It is our home on land,
our ark on water,
Our minute in its flight,
Our wheat in the field,
Our way in the unknown,
Our glory in bravery.
It is our bristle and harvest,
our genius and lyre,
a caravan and a shore,
AND
Our ever-burning hearth,
our inconsumable dowry,
From Omega to Alpha.

* * *

Our Language

Our language is our conscience,
The holy bread of our table,
It is the righteous call of our soul
And the taste in our mouth.

Our language is the smoke of our house,
Our balance in this world,
It is the salt of our identity,
The great mystery of essence.

Our language is our blood,
Precious more than the blood,
It is our fragrance and color,
Our language is us, and we are.

It should be our first
And last love,
What else in this world
Is so much ours?

* * *

Armenian Language (Excerpt)

The seed of our existence exploded with you,
With you we became home and country,
You blustered in the ancient soil of Ararat
Until your sound transformed into letter.

You have been the spirit of our reed's tube,
You have been our spirit's struggling call...
We could have lived even without the land,
But we could have not lived without you.

The king and the nobility spoke with you,
With you the wearied and poor peasant spoke
To his inexistent god, to his heart, and even
To the yoked oxen that shared his suffering.

In all the dark paths that we crossed,
You have been armature and support,
You have embodied our righteous idea,
And you have been Wrathful Mher and David of Sassun.

You have sounded sometimes like a trumpet calling for fight,
And have sometimes moaned like a painful heart,
You have woven folktales, myths, and epics,
And a Book of Laments, proverbs, and prayers.

O my ancient and young Armenian language,
You will bloom even flusher,
As our dreams are now woven in Armenian;
How can we live without you?

Storms and winds cannot take you away from us,
Nor can any disaster hinder you;
You are the sun of our being, the spirit of our identity
From eternity unto eternity.

* * *

SILVA GABUDIGIAN

Words to My Son

With this spring and these flowers,
With this birdie and this brook,
With this song and awakening,
My child began to speak.
And he babbled a priceless word
Of our sacred Armenian language,
As if a communion portion

Touched my child's lips...
"Listen, my son, as to a commandment
The heartfelt words of your loving mother;
Today, I deliver to you
The most precious Armenian language.
"It has crossed, as starlight,
The heavens of time,
And blustered tumultuously
With the flight of Haig's arrow,
"And with Mesrob's sacred genius
It has become letter and parchment,
It has become hope and banner,
And has kept our march unaltered...
"With it the Armenian refugee
Murmured the wound of his heart;
With it thundered
The song of my people's fight,
"With it my young mother
Put me one day in the cradle,
And its centuries-long gurgle
Has now reached you...
"Open your lips, speak, my precious!
Sing ardently, my beloved!
Let our aged Armenian language
Become a child on your lips...
"Keep it lofty and clear
Like the sacred snow on Ararat,
Keep it close to your heart
Like the ashes of your ancestors,
"And protect it by your chest
From dark enemy's strike,
As you would protect your mother
If they pull their sword on her.
"And behold, my son, wherever you are,
Wherever you go under this moon,
Should you forget even your mother,
Do not forget your mother tongue!"

Ode to Mesrob

Mesrob!

Skilled stonecutter of the rocks of Ararat,
Who extracted songs from lyre-like stones,
And precise word-cutter of the Armenian language
Who picked light from crystal-like words.

Mesrob!

A fecund coulter that cuts the Armenian genius
Who transformed the naked stone into vegetation.
And a swift pen that ploughs the Armenian centuries,
Inseminating the barren page with stars.

Mesrob!

Name of storm, thunder of light,
Who extinguished the flames of darkness and turned them to
ashes;

The blacksmith of Armenian Spirit, a fiery arm
Who fastened the shaky castle of belief.

Mesrob!

Still an awake eyelid in your sleep at Oshagan,
Watching over the lamps of the Armenian Mind;
The never-worn lantern of the star of the Illuminator
Who sustains the Armenian Spirit now scattered throughout the
world.

O Saint Mesrob!

A golden greeting to you, O thunder of Armenian Logos...



The church of Oshagan where Mesrob Mashdorts was buried.
Օշականի եկեղեցին, ուր թաղված է Մեսրոպ Մաշտոցը:

ՀԱՅՈՑ ԳԻՐԵՐՈՒ 1600-ԱՄԵԱՅ ԽՈՐՀՈՒՐԳԸ

Ե. դարու արշալոյսին Սբ. Մեսրոպ Մաշտոցը ստեղծեց հայոց այբուբենը: Մեր մատենագրութեան մէջ Մեսրոպեան գիրերու ստեղծման եւ հայ դպրութեան սկզբնաւորման ժամանակին մասին կան բազմաթիւ տուեալներ. տատանման կորագիծը 392-413 թուականներն են: Յենելով, սակայն, Մաշտոցի աշակերտ և առաջին կենսագիր Կորիւնի «Վարք Մաշտոցի» աշխատութեան ժամանակագրական ցանկին վրայ՝ այլևս ճշդուած և ընդունուած է հայ գիրերու գիւտի վաւերական տարեթիւը՝ 405:

Պատմական այս իրադարձութեան իրական արժէքը գնահատելու համար հարկ է մտովի 16 դար ետ երթալ՝ յիշելու տիրող կացութիւնը Հայաստանի մէջ: Վերջինս 387 թուականին կորսնցուցեր էր իր քաղաքական ամբողջականութիւնն ու անկախութիւնը եւ բաժնուեր երկու հարեւան երկիրներու՝ Բիւզանդիայի եւ Պարսկաստանի միջեւ: Անոնք ո՛չ միայն իրենց օրէնքները կը պարտադրէին մեզի, այլեւ լեզուն եւ մշակոյթը:

Քրիստոնէութիւնը, որ Հայաստանի մէջ պետական կրօնք հռչակուեր էր մօտ մէկ դար առաջ՝ 301 թուականին, տակաւին հեռու էր համագային կրօնք ըլլալէ:

Ժամասացութիւնն ու եկեղեցական միւս արարողութիւնները կը կատարուէին ժողովուրդին անհասկնալի լեզուներով՝ յունարէն կամ ասորերէն: Երկիրը լեցուն էր յոյն եւ ասորի քարոզիչներով: Ամէն տեղ կը վիստային աղանդները:

Կրօնական եւ մշակութային ձուլումը կանխելու եւ ազգային ուժացման վերահաս վտանգը հեռացնելու միակ միջոցը սեփական գիրի ստեղծումն էր:

Ան պիտի թոյլատրէր ոչ միայն հայկական դպրոցներ բանալ եւ ազգային կրթութեան հիմքը դնել, այլեւ ունենալ օտար մշակոյթներու ազդեցութիւնը թուլցնող ինքնուրոյն գրականութիւն:

Բարեբախտաբար նման համոզման յանգած էին հայոց թէ՛ հոգեւոր, թէ՛ աշխարհիկ առաջնորդները: Երբեմնի զինուորական Մեսրոպ Մաշտոցը, որ կրօնաւոր ձեռնադրուելէ ետք իր անձը նուիրեր էր քարոզչական գործունէութեան, Գողթն գաւառին մէջ Աւետարանն ուսուցանելու ընթացքին դիմադրաւած բազում դժուարութիւններէն ետք կ'ուղղուի Վաղարշապատ մայրաքաղաք:

Յանձինս Սահակ Պարթեւ կաթողիկոսին եւ Վռամշապուհ թագաւորին ան կը գտնէ համախոհներ եւ հովանաւորներ: Անոնց խրախոյսով ալ ան կը ստանձնէ հայոց այբուբենի ստեղծման յոյժ կարեւոր գործը:

Այդ նպատակով նախ կը գործադրէ «Դանիէլեան նշանագիրերը»՝ համոզուելով որ անոնք անկատար են եւ չեն համապատասխաներ հայոց լեզուի պահանջներուն: Ապա՝ կը մեկնի Եդեսիա, պրպտումներ կատարելու տեղւոյն հռչակաւոր դիւանատան մէջ: Տիրապետելով յունարէնին, ասորերէնին եւ պարսկերէնին՝ ան կ'ուսումնասիրէ անոնց տառաձեւերը եւ կը ծանօթանայ գրութեան սկզբունքներուն: Միաժամանակ խորութեամբ կը հետազօտէ հայերէնի հնչիւնային համակարգը եւ վերլուծաբար երեւան կը հանէ անոր նմանութիւններն ու տարբերութիւնները այլ լեզուներէ: Երկու տարուան որոնումներէ եւ ստեղծագործական տքնանքէ յետոյ, 405 թուականին Եդեսիոյ մէջ ան կ'երկնէ հայոց տառերը, կը դասաւորէ զանոնք, անոնց կու տայ անուններ ու թուային արժէքներ եւ կը մեկնի Սամոսատ՝ յոյն յայտնի գրագիր Հռոփանոսի օգնութեամբ յարդարելու անոնց գեղադրութիւնը:

Այնքան սպասուած եւ միեւնոյն ժամանակ անսպասելի էր գիրերու գիւտը, որ ժամանակակիցներու կողմէ ան համարուեցաւ երկնառաք հրաշք, աստուածային պարգեւ: Հայ պատմիչ Կորիւնը «սքանչելի ծնունդներ» կը կոչէ հայոց տառերը: Իր «Վարք»ին մէջ ան կը նկարագրէ այն խանդավառութիւնը, որով հայոց Վռամշապուհ թագաւորն ու Սահակ Պարթեւը «նախարարագունդ աւագանիին բոլոր բազմութիւնն առնելով», ընդառաջ կ'երթան երանելի Մաշտոցին: Դիմաւորութեան այսօրինակ հանդիսաւորութեան եւ համընդհանուր ցնծութեան մէջ կը շեշտուի ոչ միայն Մաշտոցի մեծագործութիւնը, այլեւ անոր գիտակցումը ժողովուրդին կողմէ:

Մաշտոցեան այբուբենը թէ՛ իր ստեղծման ժամանակ, թէ՛ նաեւ այժմ լաւագոյնս կ'արտայայտէ մեր լեզուին արտասանական առանձնայատկութիւնները եւ երկար ու ձիգ դարերու ընթացքին գրեթէ չէ կրած էական փոփոխութիւններ: Զայն ստեղծելու ընթացքին Մաշտոցն առաջնորդուեցաւ մէկ հնչիւնին մէկ տառ յատկացնելու սկզբունքով, որուն հետեւանքով ունեցանք կատարեալ այբուբեն մը: Անոր հանճարեղութիւնն այն էր, որ ուղեցոյց ունենալով յունարէնը եւ բազմակողմանի քննութեան ենթարկելով իրեն ծանօթ միւս լեզուները՝ ան

օգտագործեց անոնց այբուբենական համակարգերուն առաւելութիւնները (օրինակ՝ աջընթաց գրութիւնը), միաժամանակ կրցաւ խոյս տալ անոնց թերութիւններէն: Ան խիզախաբար փոփոխեց նոյնիսկ կէտադրական նշանները՝ ստեղծելով նաեւ գուտ հայկականները (բուլթ, հարցական եւ բացականչական նշաններ):

Ուշագրաւ է, որ այս գիւտէն յետոյ, ըստ Կորիւնի, Մաշտոցը հրաւէր կը ստանայ հարեւան երկրներէ՝ Վրաստանէ եւ Ադուանքէ, եւ անոնց համար ալ կը ստեղծէ տառեր:

Մաշտոցը, սակայն, լոկ տառաստեղծ չէր, որ իր գործն աւարտած նկատէր հայերէնի համար նշանագիրեր յօրինելով: Այդ տառերով ան հիմքը դրաւ հայոց դպրոցին եւ մեր դպրութեան՝ կրթելով գրագէտ եւ ազգային գիտակցութեամբ տոգորուած հայ սերունդներ: Միաժամանակ ան ծաւալեց ու Սահակ Պարթեւի հետ գլխաւորեց գրական-մշակութային հզօր շարժում մը, որուն մասնակիցները դարձան Եգնիկ Կողբացին, Եղիշէն, Մովսէս Խորենացին, Ղազար Փարպեցին եւ շատ ուրիշներ:

Բնական է որ, որեւէ նորածին գրականութեան նման, այդ շարժումն սկսէր թարգմանութեան գործով: Նախ թարգմանուեցաւ Աստուածաշունչը, ուր գրաւոր հայերէնն այնպիսի արժանիքներ երեւան հանեց, որ դարեր անց Ֆրանսացի նշանաւոր գիտնական Լա Քրոզին հիմք տուաւ զայն անուանելու «Թագուհի թարգմանութեանց»: Այդ թարգմանութիւնը մեծապէս խթանեց Սուրբ Գիրքի իւրացումը եւ հայ կեանքի քրիստոնէացումը: Զմոռնանք որ Գրիգոր Լուսաւորիչի սերմանած հաւատքն այդ օրերուն կրօնք ըլլալէ զատ նաեւ ազգային մշակոյթի զարգացման, աւելին՝ հայութեան պահպանման կարեւոր գործօն էր: Աստուածաշունչէն բացի, հայերէն թարգմանուեցան մեկնողական, վկայաբանական, փիլիսոփայական եւ պատմական բնոյթի բազմաթիւ երկեր: Յաճախ մեր իմաստուն նախնիներու թարգմանութիւններուն շնորհիւ կորուստէ փրկուեցան յոյն եւ ասորի պատմիչներու եւ փիլիսոփաներու շատ գործեր, որոնք չեն պահպանուած բնագրերով: Թարգմանչաց տօնը, որ դարեր շարունակ Հայաստանի մէջ կը նշուի առէն տարուան Հոկտեմբերին, յարգանքի եւ խոնարհումի իւրապատուկ տուրք է մեր հին ու նոր բոլոր թարգմանիչներուն:

Ազգային այբուբենի ստեղծումը հող նախապատրաստեց ստեղծագործական հետագայ վերելքի համար՝ ծնունդ տալով նաեւ ինքնուրոյն գրականութեան ստեղծման: Հայերէնի առաջին

նախադասութիւնը՝ «Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ», վերցուած «Առակաց Գիրք»էն, կանխորոշեց մեր դպրութեան զարգացման հետագայ ամբողջ ընթացքը՝ խորհուրդ տալով ապաւինիլ հանճարներու խօսքին ու իմաստութեան: Հայոց պատմիչներու աշխատութիւններն արտացոլացուցին ոչ միայն իրենց ժամանակի, այլեւ անցեալի կարեւոր իրադարձութիւնները՝ ժողովուրդին վերադարձնելով իր պատմութիւնն ու պատմական յիշողութիւնը: Եւ դարը դարձաւ մեր գրականութեան Ոսկեդարը: Ազգային արժէքներու վրայ դաստիարակուեցան հայութեան այն սերունդները, որոնք կարճ ժամանակ անց պիտի մեր հաւատքն ու արժանապատուութիւնը պաշտպանէին գարնանայորդ Տղմուտի ափին Աւարայրի ճակատամարտի ընթացքին: Այս մասին իր «Հայոց Պատմութիւն»ին մէջ կ'ակնարկէ Մովսէս Խորենացին՝ գրելով թէ Մեսրոպը ոչ թէ կը սորվեցնէր իբրեւ արուեստ, այլ աշակերտներուն կարծես հոգի կը ներշնչէր իբրեւ առաքեալ: Այդ ոգին էր որ դարերու երթին մէջ հայը հայ պահեց՝ ի հեճուկս դառնաղէտ հանգամանքներու:

Պատահական չէ որ հայոց մեծերը Մաշտոցը գիւտարար եւ հայ դպրութեան հիմնադիր անուանելէ առաջ՝ քաղաքագէտ են կոչեր , իսկ հայոց տառերը համեմատել 36 գինուորներու հետ: Այբուբենի ստեղծմամբ ան օտարի բազուկին հակադրեց հայուն միտքը, հիմքը դնելով ազգային գաղափարախօսութեան:

Գիրքերու գիւտէն ետք, Սբ. Մեսրոպ ապրեցաւ երեք ու կէս տասնամեակ՝ նուիրուելով քարոզչութեան ու սերունդներու հայեցի կրթութեան գործին: Սահակ Պարթեւի հետ միասին ան աշակերտներ կը ժողովէր Վաղարշապատի մէջ, կը կրթէր եւ ուսուցիչներ կը պատրաստէր անգէտ մարդոց համար: Իբրեւ հետեւանք, ազգային գիտակցութեան ու ինքնաճանաչողութեան այնպիսի ալիք բարձրացաւ, որ չէր եղեր երբեւէ:

440 թուականի Մեհեկան ամսու 13-ին (Փետրուար 17) երանելին կնքեց իր մահկանացուն եւ մեծ պատիւով ու ժողովուրդի բազմութեամբ թաղուեցաւ Արագածի փէշերուն գտնուող Օշական գիւղի եկեղեցիին ստորգետնեայ խորանին ներքեւ: Անոր գերեզմանն այնուհետեւ ուխտավայր, իսկ աճիւնին վրայ դրուած անշուք քարը սրբատեղի դարձան աշխարհացորիւ հայութեան համար: Ժողովրդական այդ անպարագիծ սէրն արտայայտուեցաւ նաեւ մեր գրողներու եւ բանաստեղծներու ստեղծագործութիւններուն մէջ: Դարերու ընթացքին Մաշտոցի անուան շուրջ անհա-

չիւ զրոյցներ եւ ասքեր հիւսուեցան, բանաստեղծութիւններ ու պոէմներ, պատմութեանքներ ու վէպեր գրուեցան: Թերեւս ղժուար է գտնել հայ բանաստեղծ մը, որ չէ ներշնչուած մեծ Լուսա-
ւորիչին կերպարով:

Արդ, հայոց գիրերու գիւտի 1600-ամեակին առիթով ԱՄՆ Արեւելեան Թեմի Առաջնորդարանին կողմէ հրատարակուող այս գրքոյկին մէջ մէկտեղուած է այդ հսկայ ժառանգութենէն փոքր փունջ մը միայն: Ընտրուած քերթուածները եւ հատուածաբար ներկայացուող պոէմներն ու գիտական ստուար գրականութենէն առանձին դրուագները միայն գեղօններ չեն մեր մայրենիին: Հայ թէ օտար մեծերու ասոյթներուն հետ միասին, անոնք հակիրճ բանաձեւումն են հայոց լեզուի դերին ու Մաշտոցեան գիւտի խորհուրդին՝ մեր ժողովուրդի կեանքին մէջ: Անոնք նաեւ յորդոր են մեզի ու գալիք սերունդներուն՝ բարձր պահելու ազգակերտումի այդ հզօր ջահը, որ եղեր է եւ այսօր եւս կը մնայ հայութեան տարբեր հատուածներու միասնականութիւնն ու միութիւնն ապահովող գլխաւոր կռուանը:

1600-ամեակի այս համազգային յօբելեանը պատեհ առիթ է անգամ մը եւս ընդգծելու հայոց գիրերու եւ հայ լեզուի նշանակութիւնը մեր հոգեւոր եւ մշակութային կեանքին մէջ: Միա-
ժամանակ, ան յիշեցում է բոլորիս՝ վերահաստատելու մեր սէրն ու հաւատարմութիւնը հայ լեզուի նկատմամբ: Սէր, որ պէտք է արտայայտուի նախ եւ առաջ գործով, որ է՝ ամէն օր ու ամէն ժամ մայրենի լեզուին գործածութիւնը: Զէ՞ որ հոն ուր դեռ հայ մանուկի շուրթերէն կը ծորի եւ քահանային աղօթքով դէպի երկինք կը բարձրանայ մեր ազգային ամենահզօր երգը՝ ԱՅԲ-
ԲԵՆ-ԳԻՄ-ը, հոն անմեռ է Հայու ոգին ու Հայ ինքնութիւնը:



The statues of Mashdots and Goriun at the entrance of Madenataran.

Մաշտոց եւ Կորիւնի արձանները Մատենադարանի մուտքին:

Մենարոպ Մաշտոցի Մասին

ՎԱՐՔ ՄԱՇԹՈՅԻ

Մաշթոց էր անունն այն մարդուն, որուն համար մենք հոգ տարած ենք պատմել: Տարօն դաւառէն էր ան, Հացեկաց գիւղէն, Վարդան անունով երանելի մարդու որդին: Մանկական հասակին մէջ ան կրթուեր էր հելլենական դպրութեամբ, ապա եկեր հասեր էր Մեծ Հայաստանի Արշակունի թագաւորներու դուռը, կեցեր էր արքունի դիւանատան մէջ՝ դառնալով արքային տուած հրամանին ծառայողը ոմն Առաւանի մեր Հայոց աշխարհի հազարապետութեան ժամանակ: Ան տեղեակ ու հմուտ էր աշխարհի կարգերուն, իր զինուորական արուեստով սիրելի էր դարձեր իր զօրականներուն: Եւ հոն ալ ջանալով ուշադրութեամբ կը հետեւէր աստուածային գիրքերու ընթերցանութեան, որով եւ շուտով լուսաւորուեցաւ ու թափանցեց, խորամուխ եղաւ աստուածային հրամաններու հանգամանքներուն մէջ, եւ ամէն պատրաստութեամբ զարդարելով իր անձը՝ իշխաններուն ծառայութիւն կը կատարէր:

Եւ անկէ ետք ան ըստ աւետարանական կանոնի դարձաւ մարդասէր Աստուծոյ ծառայութեան. այնուհետեւ մերկացան (իրմէ) իշխանական ցանկութիւնները եւ պարծանքի խաչն առնելով՝ դուրս եկաւ ամենակեցոյց խաչուածին ետեւէն: Եւ (հաւատքի) հրամաններուն հաւանելով, խառնուեցաւ Քրիստոսի խաչակիր գունդին ու շուտով մտաւ միայնակեցական կարգը: Շատ եւ տեսակ-տեսակ վշտակեցութիւններ կրեց ըստ Աւետարանին ամէն բանով. իր անձը կու տար ամէն հոգեւոր վարժութեան, միանձնութեան, լեռնակեցութեան, անօթութեան ու ծարաւի եւ բանջարաճաշակութեան, անլոյս արգելարաններու, խարազնազգեստ ու գետնատարած անկողիներու: Շատ անգամ ալ գիշերուան հեշտալի հանգիստն ու քունի հարկը ոտքի վրայ տքնութեամբ կը վերջացնէր մէկ ակնթարթի մէջ: Եւ այս ամէնը կ'ընէր ան ոչ սակաւ ժամանակ: Եւ քանի մը հոգի եւս գտեր, յարեցուցեր էր իրեն՝ աշակերտ դարձնելով նոյն սովորական աւետարանութեան:

Եւ այսպէս ան կամայական քաջութեամբ տանելով բոլոր վրայ հասած փորձութիւնները եւ պայծառանալով՝ ծանօթ եւ հաճելի դարձեր էր Աստուծոյ եւ մարդոց:

... Երանելի Մաշթոցը՝ արքային հրամանով եւ սուրբ Սահակի համաձայնութեամբ՝ խումբ մը մանուկներ առաւ հետը եւ սուրբ համբոյրով իրարու հրաժեշտ տալէ յետոյ, ճամբայ ինկաւ, գնաց Հայոց արքայ Վռամշապուհի հինգերորդ տարին եւ հասաւ ասորիներու երկու քաղաքներ, որոնց առաջինը Եդեսիա կը կոչուի եւ երկրորդին անունն է Ամիդ:

Աշակերտասէր ուսուցիչն իր հետ տարածները երկու (խումբի) բաժնելով՝ ոմանց ասորական դպրութեան կարգեց (Եդեսիա քաղաքին մէջ) եւ ոմանց յունական դպրութեան (կարգելով)՝ հոնկէ ուղարկեց Սամուսատական քաղաքը:

... Եւ ան իր ընկերներուն հետ սկսաւ սովորական աղօթքներուն ու տքնութիւններուն եւ արտասուալից պաղատանքներուն, խստամբերութիւններուն, աշխարհահեծ հոգերուն, յիշելով մարգարէին ըսածը, թէ՛ «Երբ որ հեծեծես, այն ժամանակ կ'ապրիս»:

Եւ այսպէս ան շատ նեղութիւններ քաշեց իր ազգին բարի օգնութիւն մը գտնելու համար: Ամէն բան շնորհող Աստուծմէ իսկապէս պարգեւեւեցաւ անոր (այդ) բախտը՝ ան իր սուրբ աջով հայրաբար ծնունդ տուաւ նոր եւ սքանչելի ծնունդներու՝ հայերէն լեզուի նշանագիրներու:

Եւ սկսաւ թարգմանել (Սուրբ) գիրքը՝ նախ Սողոմոնի առակներէն, որ սկիզբը պարզապէս կը յանձնարարէ ծանօթ ըլլալ իմաստութեան, ըսելով. «Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»:

... Եւ արդ, երբ յիշելին (Մաշթոցը) եկաւ, մօտեցաւ թագաւորական քաղաքին, լուր տուին թագաւորին եւ սուրբ եպիսկոպոսին: Անոնք նախարարագունդ աւագանիին բոլոր բազմութիւնն առնելով՝ քաղաքէն դուրս եկան, Ռահ գետի ափին դիմաւորեցին երանելին: Եւ ցանկալի ողջոյնը իրարու տալէ յետոյ, հոնկէ ցնծութեան ձայներով եւ հոգեւոր երգերով ու բարձրաձայն օրհնութիւններով ետ դարձան քաղաքը, եւ տօնական ուրախութեամբ անցուցին օրերը:

... Եւ այնուհետեւ աստուածային գործի մշակութիւնն ընելով՝ սկսան աւետարանական արուեստին, թարգմանել, գրել եւ սորվեցնել. մանաւանդ որ աչքի առջեւ ունէին Տիրոջ տուած բարձր հրամանները:

Մեր երանելի հայրեր Սահակն ու Մաշթոցը, թոյլտուութիւն ստանալով, իրենց մշակութիւնը յուսալից ջանքով դարձուցին երեւելի եւ սրդիւնաբեր ըստ Աւետարանին:

Այն ժամանակ անպայման սքանչելի դարձաւ մեր երանելի ու ցանկալի Հայաստան աշխարհը, ուր երկու հաւասարակիցներուն ձեռքով յանկարծ, մէկ անգամէն եկան հասան հայաբարբառ, հայերէնախօս դարձան օրէնսդատաց Մովսէսը՝ մարգարէական դասուն հետ, եւ յառաջագէմ Պօղոսը՝ ամբողջ առաքելական գունդով, Քրիստոսի աշխարհակեցոյց Աւետարանին հետ միասին:

Ի՞նչ սրտալիւր ուրախութիւն էր հոն այնուհետեւ, եւ ի՞նչ հաճելի տեսարան աչքի համար: Որովհետեւ երկիր մը, որ անունն անգամ չէր լսած այդ կողմերուն, ուր բոլոր աստուածային սքանչելի գործերը կատարուեցան, շատ շուտով, իսկոյն իմացաւ բոլոր եղած բաները, ոչ միայն ժամանակով կատարուածները, այլեւ առաջագոյն յաւիտենականութիւնը, եւ յետոյ եկածները, սկիզբը եւ վերջը, եւ բոլոր աստուածային աւանդութիւնները:

... Իսկ երբ իրերու հաստատութիւնը փորձեցին, ապա աւելի համարձակ եւ ավելի շատ կը ժողովէին նորագիւտ ուսման համար աշակերտներ՝ սովորեցնելու, կրթելու եւ անգէտ մարդոց քարոզելու համար պատրաստելու: Անոնք (ուսման ծարաւիները) իրենք ալ Հայաստան աշխարհի զանազան կողմերէն ու գաւառներէն բազմութեամբ կ'ելլէին, գալով կը հասնէին աստուածային գիտութեան բացուած աղբիւրը: Որովհետեւ Այրարատեան գաւառին մէջ, Թագաւորներու եւ քահանայապետներու նստավայրին մէջ բխեցաւ հայերու համար Աստուծոյ պատուիրաններուն շնորհքը:

Եւ իսկապէս՝ եկեղեցւոյ սիւներն սկսան համարձակ ձեռքով Քրիստոսի աւետարանիչներու գործը կատարել, Հայաստան ազգի զանազան կողմերը, գաւառներն ու տեղերը խումբ-խումբ ուղարկել ճշմարտութեան աշակերտները, գիտութեան մէջ կատարելութեան հասցուածներուս (խումբերը)՝ կարող (համարելով) ուրիշներու ալ սորվեցնելու: Անոնց համար կանոն եւ օրինակ դրին իրենց վաստակը եւ պատուիրեցին նոյն կանոնին մէջ մնալ:

Եւ իրենց աստուածային իմաստութեամբ կրթեցին հոն իսկ իրենց մօտ եղած արքունիքը ամբողջ ազատագունդ բանակին հետ: Երանելի Սահակն ուսման վարժութեամբ կը զբաղեցնէր աւելի Մամիկոնեան մարդիկը, որոնց առաջինին անունն էր Վարդան: Նոյնպէս եւ ամէն մարդ կ'աշխատէր կրթել, անոնց հասկցնել ճշմարտութեան գիտութիւնը:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

Տեսնելով որ Հայոց թագաւորութեան վերջը հասեր է, Մեսրոպն (աշխարհի) խռովութիւններն իր համբերութեան նիւթ դարձուց: Ան Տարօնի Հացեկաց (գիւղէն) էր, սներ ու սորվեր էր մեծն Ներսէսի մօտ եւ անոր վախճանումէն յետոյ արքունական դրան մէջ քարտուղար նշանակուեր էր: Ան սիրեց մենակեցութեան վարքը եւ աշխարհային զբաղմունքներէ փախչելով, մէկ կողմ նետելով մարմնական պատիւը, երկնաւորին ետեւէն կ'երթար: Ան կ'երթայ Գողթն գաւառը եւ կ'ապրի մենակեացի կեանքով: Ան գաւառի իշխանին օգնութեամբ վերացուց հոն պահուրտած հեթանոսական աղանդը, որ Տրդատի օրերէն մինչեւ այդ ժամանակ ծածուկ կը մնար եւ Արշակունեաց թագաւորութեան տկարանալուն ժամանակ երեւան եկաւ:

Երբ երանելի Մեսրոպը կ'ուսուցանէր, փոքր նեղութիւն չէ որ կը կրէր, որովհետեւ ինքն էր թէ՛ կարդացողը եւ թէ՛ թարգմանողը, եւ եթէ ուրիշ մը կարդար, երբ ինքը հոն չ'ըլլար, ժողովուրդին անհասկնալի կը մնար՝ թարգմանիչ չ'ըլլալու պատճառով: Ուստի ան միտքը դրաւ հնարք մը գտնել, Հայոց լեզուի համար տառեր ստեղծել, եւ աշխատանքի անձնատուրը ըլլալով զանազան փորձերով կը չարչարուէր:

... Մեսրոպը աշակերտներով կ'իջնէ Միջագետք նոյն Դանիէլին մօտ, եւ նախկինէն աւելի բան չգտնելով՝ կ'անցնի Եդեսիա, Պղատոն անունով հեթանոս ճարտասանի մը քով, որ դիւանի պետն էր: Ան ուրախութեամբ ընդունեց, եւ ինչքան որ հայերէն խօսքեր միտքը կը բերէր՝ հաւաքելով եւ շատ ջանք թափելով՝ օգուտ չունեցաւ հռետորը եւ խոստովանեցաւ իր սգիւտութիւնը: Բայց ան ըսաւ թէ ինքն առաջ ունեցեր է ուսուցիչ մը, շատ հմուտ մարդ մը, որ յետոյ ճարտարներու գրուածքներն Եդեսիայի դիւանէն առնելով գացեր ու քրիստոնէութիւն է ընդուներ, անունը՝ Եպիփանոս. «Զինք, ըսաւ, փնտռէ, գտիր, որ քու փափաքը լեցնէ»:

Այդ ժամանակ Մեսրոպը Բաբելոս եպիսկոպոսէն օգնութիւն գտնելով՝ Փիւնիկէով անցաւ դիմեց Սամոս, որովհետեւ Եպիփանոսը մեռած էր, ձգելով աշակերտ մը Հռոփանոս անունով, որ յունարէն գրութեան հրաշալի արուեստ ունէր եւ առանձնացեր

էր Սամոս: Մեսրոպը կ'երթայ անոր քով եւ անկէ ալ շահ չգտնելով, կ'ապաւինի աղօթքի: Եւ կը տեսնէ ո'չ երազ քունի մէջ, ո'չ տեսիլք արթնութեան մէջ, այլ սիրտի գործարանին մէջ անոր հոգւոյն աչքերուն կ'երեւայ աջ ձեռքի թաթ մը՝ քարի վրայ գրելու պահուն, այնպէս որ քարը գիծերու հետքը կը պահէր, ինչպէս ձիւնի վրայ: Եւ ոչ միայն երեւաց, այլեւ բոլոր (գիրերու) հանգամանքները անոր միտքը հավաքուեցան ինչպէս ամանի մէջ: Եւ աղօթքէն ելլելով՝ ստեղծեց մեր նշանագիրները, Հռոփանոսի հետ ձեւակերպելով Մեսրոպէն պատրաստուած գիրերը, հայերէն տառերը ճիշդ հանդիպեցնելով յունարէնի հնչիւններուն: Եւ իսկոյն ձեռնարկեցին թարգմանութեան, խորհրդաբար սկսելով (Սողոմոնի) Առակներէն, ամբողջ քսաներկու յայտնի գիրքերը եւ Նոր Կտակարանը կը փոխադրէ հայերէն լեզուի, նոյնպէս եւ անոր աշակերտները, Յոհան Եկեղեցացին եւ Յովսէփ Պաղնացին, միեւնոյն ժամանակ իր աւելի փոքր աշակերտներուն սորվեցնել տալով գրչութեան արուեստը:

... Մեսրոպ վրաց աշխարհը երթալով՝ անոնց համար ալ, իրեն տրուած երկնային շնորհով, կը ստեղծէ նշանագիրներ, ոմն Զաղայի հետ, որ յունարէն եւ հայ լեզուներու թարգմանիչ էր, օժանդակութիւն գտնելով անոնց Բակուր թագաւորէն եւ Մովսէս եպիսկոպոսէն: Կ'ընտրէ երախաներ, կը բաժնէ երկու դասի, եւ անոնց համար ուսուցիչներ կը ձգէ իր աշակերտներէն Տէր Խորձենացին եւ Մուշէ Տարօնացին:

Ինքը կ'իջնէ Աղուանք, անոնց Արսուաղեն թագաւորին եւ Երեմիա եպիսկոպոսապետին քով, որոնք յօժարութեամբ յանձն առին իր ուսումը եւ իրեն յանձնեցին ընտիր երախաներ: Ան կանչեց Բենիամին անունով շնորհալի թարգմանիչ մը, որուն անմիջապէս արձակեց Սիւնիքի տէր Երիտասարդ Վասակը, իր Անանիա եպիսկոպոսին միջոցով, որոնց (օգնութեամբ) ան նշանագիրեր ստեղծեց Գարգարացիներու այդ կոկորդաձայն, կոշտ, խժական, կոպիտ լեզուին համար: Հոն վերակացու ձգելով իր Յովնաթան աշակերտը, ան արքունական դրան քահանաներ նշանակելով՝ ինքը կը վերադառնայ Հայաստան եւ կը տեսնէ թէ մեծն Սահակ զբաղած է (Ս. գիրքի) թարգմանութեամբ ասորերէնէ, յունարէն չգտնուելու պատճառով: Որովհետեւ նախ Մեհրուժանն այրեր է յունարէն գիրքերը մեր ամբողջ երկրին մէջ, իսկ այնուհետեւ, երբ Հայոց աշխարհը (երկու մասի) բաժնուեցաւ, պարսիկ վերակացուներն իրենց մասին մէջ ոչ ոքի

Թոյլ կու տային յունարէն սորվիլ, այլ միայն ասորերէն:

Այնուհետեւ Մեսրոպը ետ եկաւ, եւ ինք ու մեծն Սահակ նոյն աշակերտները, Յովսէփն ու անոր միւս ընկերը Կողբ գիւղէն, որու անունն էր Եգնիկ, ուղարկեցին Միջագետք, Եդեսիա քաղաքը, որպէսզի ինչ գիրքեր որ հոն գտնեն առաջին սուրբ հայրերէն գրուած, շուտով մեր լեզուով թարգմանեն ու բերեն, որպէսզի այնուհետեւ Բիւզանդիոն ուղարկուին նոյն գործով:

... Սուրբ Սահակի վախճանումէն վեց ամիս յետոյ, Մեհեկան ամսու տասներեքին, երանելի Մեսրոպն ալ այս աշխարհէն փոխուեցաւ Վաղարշապատ քաղաքին մէջ, գերազանցելով բոլոր առաքինի մարդիկը, որոնք այն ժամանակ կային: Որովհետեւ ամբարտաւանութիւնը եւ մարդահաճութիւնը անոր վարքին մէջ երբեք տեղ չգտան. ան հեզ, բարեացակամ եւ բարեմիտ ըլլալով, կ'երեւէր բոլորին՝ եկնայիւններու սովորութեամբ զարդարուած: Որովհետեւ ան հրեշտակի տեսք ունէր, ծննդական միտք, պայծառ էր խօսքով, գործերով ժուժկալ, մարմնով փառահեղ, սովորութիւններով աննման, խորհրդակցութեամբ մեծ, հաւատքով ուղիղ, յոյսով համբերող, սիրով անկեղծ, ուսուցանելու ժամանակ անձանձրոյթ:

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ

Մենք գնում ենք Մեսրոպի գերեզմանը տեսնելու: Օշականը դեռ չի երեւում, ես երբեք նրան չեմ տեսել, բայց գիտեմ, հաւատում եմ, որ բլուրների ետեւում պիտի տեսնեմ մեր դժբախտ, արիւնոտ պատմութեան ամենամեծ հրաշքը, պիտի հաղորդակից դառնամ այն հիացմունքին, որ տասնհինգ դարերի ընթացքում հայ աշխարհի բոլոր կողմերից հաւաքուել է այս համեստ, սովորական հայ գիւղում: Իբրեւ հայ գրագէտ, պիտի խոնարհուեմ իմ մեծ պապի առջեւ, որ ինձ, ինչպէս եւ ինձ նման հազարներին, գծեր է տուել՝ սրտի եւ հոգու իղձերը, թախիծն ու զգացմունքները պատկերացնելու, իսկ իբրեւ որդի մի ազգի, որին դարերի սեւ փոթորիկները մէջ պահողը եղել է գիրն ու լեզուն, պիտի իմ անհուն, կրակոտ երախտագիտութիւնը թափեմ այդ գերեզմանի վրայ...

Այցելուն գիտէ, որ այս գերեզմանի վրայ ամփոփուած է մի մեծագործութիւն, որ արժանի էր մեծ ու փառահեղ յուշարձանների: Ո՞ւր է Մեսրոպի յաւիտենական օթեւանի փառահեղութիւնը, ո՞ւր է արուեստը, որ նշանակէր, շեշտէր այս նուիրական վայրը:

Ոչինչ չկայ, եւ այցելուն առաջին վայրկեանին մի տեսակ վիրաւորանք է զգում:

Բայց դա վայրկեանական զգացմունք է, եւ անցնում է շուտով, երբ հասկանում ես հայրենի բազմադարեան իրականութիւնը: Կարո՞ղ էր փառահեղութիւնը կանգուն մնալ, դիմանալ մեր երկրում: Մի երկիր է դա, որի սարերն անգամ մաշուել են յարձակողների անխոնջ ձիերի սմբակների տակ: Ի՞նչ կը դառնային կոթողներն ու մահարձանները, եթէ նրանք դրուած էլ լինէին Մեսրոպի դամբարանի վրայ...

Արուեստը հիացնում է կրթուած, լուսաւոր սրտերը, բայց կատաղութիւն է ներշնչում վայրենիներին, որոնց հասկանալի է միայն քանդելու, կողոպտելու պաշտամունքը: Երկաթն ու որձաքարը ոչնչանում են վայրենիների մուրճի տակ եւ ոչնչացնում են այն դէպքերն ու անունները, որոնց յաւերժացնելու համար էին դրուած: Ֆիդիաի հանճարն անգամ չկարողացաւ թուլացնել քանդողների թեւերը: Իսկ այստեղ, Արագածի փէշին կպած այս

փոքրիկ գիւղի փոքրիկ եկեղեցին իր պատերի մի խոռոչում պահել-պահպանել է, աւերման, դարերի անվերջ շարքերով անց է կացրել ու մեզ հասցրել մի անշուք քար, որ այսօր մեր ամենանուիրական պարծանքն է:

Ոչ թէ հրապարակներում պաշտել այդ պարծանքն, այլ լռիկ խաղաղութեան մէջ, փոքրիկ, դողդոջուն ճրագը ձեռքին մտնել ստորերկրեայ փոսը, ուր խոնաւութիւնն ու մութը անյայտութիւն եւ մոռացութիւն են ապահովում, եւ այդտեղ տեսնել եւ զգալ, մտածել ու յուզուել,- այս հնարաւորութիւնն է տուած եղել հային...

Ո՞վ էր նա, որ սկզբից եւէթ հասկացաւ, թէ այս կերպով կարելի է յաւերժացնել մեծ մարդուն, նրա աճիւնը յանձնել դարերին իբրեւ հաստատ աւանդ:

Վահան Ամատունին՝ Օշականի իշխանը, Մեսրոպի աշակերտներից էր: Հինգերորդ դարի ապստամբական շարժման գլխաւորներից մէկն էր նա, Վարդանի, Ղեւոնդ Երէցի կողմնակիցը եւ զինակիցը: Նա թաղեց Մեսրոպին իր Օշականում, բայց մեծ ուսուցչի համար այդքանը քիչ համարեց եւ նրա գերեզմանի վրայ եկեղեցի էլ կանգնեցրեց, որի ցածրիկ, ստորերկրեայ խորշում մօտ 1500 տարի է, ինչ պահում է այդ գերեզմանը:

Մեսրոպը միայն իր ժամանակը չյեղափոխեց, այլ իր ժամանակի հայութեան ամբողջ անցեալը, ամբողջ ներկան ու ապագան: Մեր պատմութիւնը ուրիշ նոյնանման մեծագործութիւն չունի, չի ճանաչում:

3. ՄԱՐԳՈՒԱՐԴ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅԵՐԷՆ ՆՇԱՆԱԳԻՐԵՐՈՒ

Հայաստանի քաղաքական բաժանման հետեւանքով առաջացան անբարենպաստ պայմաններ: Պարսկական մասի գերագոյն իշխողները միշտ նորանոր փորձեր կը կատարէին՝ հայ ժողովուրդը մագղեգանց կրօնին դարձնելու եւ անոր մէջ պարսից լեզուն ու գրականութիւնը տարածելու համար:

Միւս կողմէ, արեւմտեան մասին մէջ իշխող հռովմէացիներն արհամարհանքով կը նայէին բարբարոսներուն եւ բնականաբար ոչ մէկ գաղափար ունէին անոնց լեզուն եւ ազգային առանձնայատկութիւններուն մասին: Բոլոր մեթրոփոլիթները չէ որ կրնային նոյնքան խելացի գտնուիլ, որքան որ էր մեծն Բարսեղը, որ ուշադրութիւն դարձուց որ Փոքր Հայքի եպիսկոպոսական աթոռներուն համար ընտրուէին հայերէնին քաջամուտ մարդիկ:

Այս տեսակէտէն ալ, երբ մենք կը քննենք այն պայմանները, որոնց մէջ Մաշտոցն ու Սահակն իրենց միտքին ուժով հայ ժողովուրդը եկեղեցական ու ազգային ինքնագիտակցութեան զարթոնքի հասցուցին եւ այս ամէնը համեմատենք այն դանայեան պարգեւին հետ, որ Ֆրանկ Փիփինը, քաղաքական ու եկեղեցական իշխանութեան բոլոր միջոցներն իր ձեռքն ունենալով, ընծայեց գերմանական ժողովուրդին՝ կը տեսնենք որ Փիփինը եւ անոր զինակից Վինֆրիտը ողորմելի թզուկներ կ'երեւին միտքի այդ երկու հսկաներուն հանդէպ:

Ժողովուրդ մը, որ ծներ է այսպիսի մարդիկ եւ զանոնք կը մեծարէ որպէս դիւցազուններու, քանի դեռ կը հետեւի անոնց օրինակին՝ երբեք չ'ոչնչանար ի հեճուկս թուրքերու, քուրտերու, թաթարներու, պարսիկներու եւ բոլոր մեծ տէրութիւններու:

Այսպիսով, մեր թուարկութեան հինգերորդ դարու սկիզբին երանելի Մաշտոցի ձեռքով կատարուած հայ գիրերու գիւտը ուշադրաւ է ո'չ միայն եկեղեցա-պատմական առումով: Զայն կարելի չէ դիտել նաեւ որպէս սոսկ ապացոյց այն եռանդին եւ պայծառ պատկերացման, որ դրսեւորեց այբուբենի հեղինակը՝ հաւատարեւ հրեշտակներու օգտակար գործունէութեան համար անհրաժեշտ նախապայմաններ ստեղծելու հարցին մէջ:

Այդպէս էր նաեւ արեւմտեան գոթացի Վուլֆիլայի կէս դարով աւելի աւագ ստեղծագործութիւնը:

Հայոց այբուբենի գիւտը ուշագրաւ է նաեւ այն տեսակետէն, որ ան կը ներկայացնէ արտակարգ մշակութային եւ պատմական երեւոյթ մը՝ որպէս մինչ այդ գրականութիւն չունեցող ժողովուրդի մը քրիստոնէական ազգային զգացման փրկութեան գործողութիւն. ժողովուրդ, որ նոյնիսկ Հայաստանի պետական ինքնորոշութեան կորուստէն շատ քիչ առաջ կրցաւ պահպանել հայկական ուրոյն կերպարը օտար ազգերու հետ համաձուլելու վտանգէն եւ կեանքի կոչեց համեմատաբար հարուստ մատենագրութիւն մը, յատկապէս պատմական եւ աստուածաբանական բովանդակութեամբ:

Ահաւասիկ համաշխարհային պատմական նշանակութիւն ունեցող երկու արդիւնք, որոնց առկայութեամբ գոթացի եպիսկոպոսին սակաւակեաց ստեղծագործութիւնը ոչ մէկ կերպով կրնայ չափուիլ հայ վարդապետին գործին հետ:

ՀԱՅՈՑ ԳՐԵՐԸ

Ս. Գրքի թարգմանությունը դարագլուխ բացաւ հայ կեանքում, նրան հետեւեց բազմաթիւ գրքերի թարգմանությունը, ամէն կողմ դպրոցներ բացուեցին: Էջմիածնի վարդապետարանը մի կողմից ուսուցիչներ էր հասցնում, միւս կողմից նորանոր երկեր հրապարակ հանում: Հռոփանոսի սովորեցրած աշակերտները տարածեցին գրչութեան արուեստը Հայաստանում: Գրիչների խմբերը սկսեցին իրար գերազանցել եւ ձեռագրերի արտագրությունները բազմաթիւ տեսակներով սփռոււմ էին ամէն կողմ: Վանքերը դարձան կրթութեան կենտրոններ, եկեղեցիները պայծառացան, հայերէն ժամերգությունը եւ հայերէն ընթերցուածները շուք ու իմաստ տուին նրանց, ու քաջում էին մարդկանց ահագին մի բազմություն, որ հաճութեամբ ունկնդրում էր մայրենի լեզուով ժամերգութեան: Վարդապետները կամ մեկնիչները բեմերից յորդաբուխ քարոզներով երկնային խօսքը սփռում էին նրանց մէջ եւ կրօնի հաստատ գիտակցությունը ամրապնդում: Վերջապէս ամբողջ երկիրը տոգորուած էր գրական-կրօնական մեծ շարժումով:

Բայց ինչ որ այդ բոլորի մէջ գերազանցում եւ ամբողջ շարժման անիւն էր կազմում, դա է՛ր անկախ ազգային ինքնաճանաչութեան եւ ազգային գիտակցութեան զաղափարը, որ մինչեւ այն չկար:

Հայաստանի ամէն կողմերում բացուած դպրոցները, էջմիածնի վարդապետարանը, Սահակի եւ Մեսրոպի անխոնջ գործունէությունը եւ իրենց աշակերտների ուսումնասէր եռանդը՝ քիչ ժամանակում այնպէս բարձրացրին հայոց հոգեւոր ու մտաւոր հորիզոնը, այնպիսի ծաղկեալ վիճակի մէջ դրին բովանդակ երկիրը, որին երբեք չհասաւ յետոյ անցեալում:

Երկու բնորոշ յատկություն ունի այդ շրջանի գրականությունը, առաջին՝ կրօնական գոյն եւ երկրորդ՝ թարգմանչություն: Այս երկու յատկություններն էլ միայն մեզ սեփական չեն եւ յատուկ են բոլոր այն գրականութեանց, որ մի անգամից ու ճոխութեամբ են մտնում ժողովրդի մէջ: Այն ժամանակուայ հասկացողութեամբ գրականությունը պարզապէս կրօնի զարգացման կամ ժամակարգութեան ծառայող մի գործիք էր:

ուսուցչական գործը յանձնուած էր միմիայն կրօնաւորներին, եւ սրա համար է, որ «Վարդապետ», որ բնապէս «ուսուցիչ կամ վարժապետ» էր նշանակուած, յետոյ դարձաւ կրօնաւորական աստիճան: Սահակը եւ Մեսրոպը նմանապէս առաջնորդուած լինելով ա՛յս գաղափարով եւ գրականութիւնը կրօնական զարգացման համար միայն տուած լինելով Ազգին, բնական է, թէ ամէնից առաջ Ս. Գիրքը եւ կրօնական գրքեր պիտի տային նրան:

Թարգմանչութիւնը նմանապէս պայման է բոլոր նոր սկսուող գրականութեանց համար, մանաւանդ նրանց, որ ուժեղ թափով են սկսում: Թարգմանչութիւններէց յետոյ պիտի գան նմանողաբար կազմուած աշխատութիւններ եւ յետոյ միայն բոլորովին անկախ գործեր:

Եւ դարը համեմատելով յաջորդ դարերի հետ, շատ ճոխ է գրական արտադրութեան կողմից, որոնց թուական առաւելութիւնը գերազանցում է բոլոր միւս դարերից. միայն ԺԲ. դարն է, որ կարող է այս կողմից մրցել Եւ. դարի հետ: Գալով լեզուական արժէքներին՝ ոչ մի դար չկարողացաւ մօտենալ ոսկեղենիկ լեզուին եւ Եւ. դարի հայերէնը ամէն դարի եւ ամէն ժամանակի համար եղաւ լեզուի դասական օրինակ:

ՄԱՆՈՒԿ ԱՔԵՂԵԱՆ

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅԸ ԵՒ ՀԱՅ ԳՐԻ ՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՍԿԻԶԲԸ

Առաջին մարդը, որ հոգացել է հայ գրի ու գրականությունեան մասին, է Մեսրոպ Մաշտոցը: Նա հիմք է դրել հայ գրականության եւ հայերէն լեզուով դպրոցի:

Մաշտոցը բնականաբար մենակ չի կատարել այդ գործը: Նրա հետ եղել են Սահակ կաթողիկոսը, Վռամշապուհ թագաւորը եւ Սահակի ու Մեսրոպի աշակերտները: Բայց նա առաջինն է եղել այդ լուսաւորական գործի մէջ, եւ ժամանակակիցներն էլ առաջին պատիւը նրան են տալիս:

Կորինը Մեսրոպեան նշանագրերը «սքանչելի» բառով է բնորոշում: Դա վերաբերում է ոչ թէ տառերի արտաքին ձեւին, այլ այբուբենի կատարելութեանը: Մաշտոցի ժամանակի այբուբեններից եւ ոչ մէկը եւ ոչ նոյնիսկ յունարէնը, բաւական չէր հայոց լեզուի բոլոր հնչիւնական հարստութիւնն արտայայտելու համար: Դանիէլեան նշանագրերը նոյնպէս թերի էին դուրս եկել, մինչդեռ Մաշտոցի այբուբենը կատարելապէս յարմարեցուած է հայերէնի հնչիւնական համակարգին: Դրանով անհամեմատ աւելի հեշտացած է եղել հայերէն գրել-կարդալու գործը, որովհետեւ «Մեսրոպեան նշանագրերը» (այսպէս անուանել է Մովսէս Խորենացին) հիմնուած են կատարեալ հնչիւնական սկզբունքի վրայ, որ է՝ ամէն հնչիւն իր առանձին տառը պիտի ունենայ, եւ ամէն տառ մէկ հնչիւնի արտայայտիչը պիտի լինի:

Մաշտոցի այբուբենի այս կատարելութիւնը հետեւանք է նրա հեղինակի՝ իր ժամանակի, նոյնիսկ մեր ժամանակի համար զարմանալի խորին ծանօթութեան հայերէնի հնչիւնական դրութեանը, մեր լեզուի բազմաթիւ հնչիւնների նուրբ տարբերութիւններին:

Դրա համար նա, որ լեզուաբանական պատրաստութիւն ունեցած չի եղել, պէտք է երկար ժամանակ դիտողութիւններ անէր կենդանի արտասանութեան վրայ, լսած բառերը վերածէր իրենց վանկերին ու հնչիւններին եւ փորձեր անէր գրելու, որ եւ նա արել է «բազում աշխատութեանց համբերեալ վասն իւրոյ ազգին բարեաց ինչ օճան գտանելոյ», այսինքն՝ շատ նեղութիւնների համբերելով իր ազգին մի բարի օգնութիւն գտնելու համար,՝ գրում է Կորինը:

Աստուածաշնչի թարգմանութեան հետ զուգընթաց Մաշտոցն ու Սահակը թարգմանել են եկեղեցու մէջ ընդունուած աղօթքները: Դրանք անհրաժեշտ էին գործնական պէտքի, ժամերգութեան համար: Դրանք, բացի աղօթքներից ու սաղմոսներից, էին նաեւ որոշ թուով նոր երգեր, որոնք ընդունուած էին ընդհանուր եկեղեցու մէջ: Դրանց մի մասը հայերէնի նշանագրերից առաջ էլ թերեւս ասորերէնից կամ յունարէնից թարգմանուած են եղել բերանացի, քանի որ ժամերգութիւնը բերանացի էր կատարուում:

Թարգմանութեան գործով, ինչպէս երեւում է, պարապել է աւելի Սահակ կաթողիկոսը, որ մանկութիւնից լաւ կրթութիւն էր ստացել յոյների մէջ: Նա էլ մի ժամանակ անձնատուր էր եղել ճգնաւորական կեանքի եւ բազմաթիւ աշակերտների հետ շրջում էր քարոզելու: Կաթողիկոս դառնալով՝ բնականաբար նուիրւում է եկեղեցու գործերին: Մաշտոցը շրջում էր գաւառները, իսկ կաթողիկոսն իր պաշտօնի պատճառով մնում էր աւելի Վաղարշապատում, ուստի եւ աւելի յարմարութիւն ունէր գրաւոր աշխատանքով պարապելու:

Մաշտոցի եւ Սահակի գործունէութեամբ մշակուած էր սեփական ազգային գաղափարախօսութիւն, կար արդէն ինքնագիտակցութեան եկած եւ լաւ պատրաստուած ու հոգեպէս զինուած մի սերունդ, որ չէր կարող հեշտութեամբ զինաթափ լինել: Սկսում է մի զօրեղ մշակութային, մէկ-մէկ նաեւ ռազմական կռիւ (Վարդանանց պատերազմը եւ Վահանանց զինեալ մաքառումը) Սահակի ու Մաշտոցի աշակերտների եւ սրանց աշակերտների՝ ընդդէմ պարսկական ու ասորական, հետագայում նաեւ յունական ոտնձգութիւնների:

Մաշտոցը, բացի քրիստոնէութիւն եւ հայկական դպրութիւն տարածելուց՝ շատ տեղերում հաստատում է վանքեր, ինչպէս Գողթնում, Սիւնիքում: Մաշտոցի հաստատած վանքերում օտար լեզուների տեղ անցնում է հայերէնը, եւ վանականները հայ դպրութեամբ, հայերէն թարգմանութիւններով էին ծանօթանում քրիստոնէական ուսմանը: Այսպիսով, վանքերն ազգայնանում են եւ դառնում են հայկական դպրոցներ, ուր պատրաստում էին հայերէն լեզուով գրագէտներ ու քարոզիչներ եւ «գրիչներ»:

Մաշտոցի ու Սահակի ու նրանց աշակերտների ջանքերով ստեղծւում է եկեղեցական հայերէն լեզուն, որ ընդունւում է երկու կողմերի հայերից ե՛ւ արեւելքում, ե՛ւ արեւմուտքում: Դրա

Հետեւանքով եւս պահւում է միութիւնը հայերի մէջ միշտ եւ ամէնուրեք: Նոյնիսկ ուշ դարերում հայերից հռովմէական եկեղեցուն անցած հատուածները չեն իշխում դիպչել հայոց եկեղեցական լեզուին եւ լատիներէնով փոխարինել այն: Այդ լեզուն դառնում է ուրեմն ազգային միութեան մի մեծ գործօն:

Բայց այդ դերը լեզուն կատարում է ոչ միայն եկեղեցու միջոցով: Եկեղեցական լեզուն է՛ր նաեւ գրական լեզու, որով կատարել էին թարգմանութիւնները: Հետագայում եւս հայ դպրութիւնը զարգանում է նոյն լեզուով եւ առաջ է գալիս համեմատաբար հարուստ հին հայկական գրականութիւնը, որ զանազան իշխանութիւնների ենթակայ հայ ժողովրդի համար դառնում է ընդհանուր հոգեւոր կեանքի, համազգային միութեան ամենամեծ պատմական գործօնը: Այդ ինքնուրոյն գրականութեան էլ ակիզը դնում են ինքը՝ Մաշտոցը, եւ Սահակի ու Մաշտոցի աշակերտները:

Ահա այդ մեծ շարժման պատմական նշանակութիւնը:

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ

Փոթորկալից ու օրհասական Ե. դարը պէտք է գտնէր ժամանակի բոլոր կնճռոտ հարցերի ելքը, պէտք է ծնէր մի այնպիսի համապարփակ հանճար, որը կարողանար մարմնաւորել ժողովուրդի, հայրենիքի, պետութեան եւ եկեղեցու բոլոր հոգեւոր ուժերը, միաւորէր նրանց եւ դնէր նպատակաւաց անսայթաք հունի մէջ: Եւ նա ծնուեց՝ ժամանակի մեծագոյն մարդը, հայ հանճարի անկրկնելի դրսեւորումը՝ տարօնցի Մեսրոպ Մաշտոցը:

Մեսրոպ Մաշտոցը Ե. դարի հարագատ ծնունդն էր ու նրա նուիրական բարձունքների, կենսական պահանջների արտայայտիչը: Մեսրոպի հանճարը դարձաւ իր ժամանակի բոլոր առաջադէմ ու հայրենաշէն ուժերի բախտորոշ եւ հուժկու կիզակէտը. ծնուած լինելով ժողովուրդի ծոցում, գիւղական միջավայրում՝ նախ իբրեւ գինուորական գործիչ նա մօտիկից շփուեց հայ գինուորականութեան հետ եւ ծանօթացաւ նրա վարքութեանը ու հոգեբանութեանը, ապա անցնելով պետական պաշտօնի հայ արքունիքում՝ տեսաւ, թէ ինչ լարուած ու օրհասական միջոյրտ է իշխում այնտեղ, ուր թագաւորի ու պետութեան գոյութիւնը կախուած է պալատից, արքունիքի քմահաճոյքից. այնուհետեւ իբրեւ միայնակեաց ու հոգեւոր քարոզիչ խոր ճանաչեց ժողովուրդի անմխիթար վիճակը, որը նոր կրօնին անհաղորդակից, հին հաւատալիքներին գերի՝ անտարբեր էր դարձել պետական եւ եկեղեցական անցուդարձերին:

Այս բոլորն իրար հետ համեմատելով ու կշռադատելով՝ երկարամեայ դեգերումներից ու հոգեկան տուճատանքներից յետոյ Մեսրոպը յանգեց այն միակ ճիշտ եզրակացութեան, որ երկրին ու ժողովրդին հարկաւոր է ներքին, հոգեւոր մի հուժկու գործօն, հայրենասիրական ոգեւորութեան մի նոր ջերմ աղբիւր, հայրենիքի զօրական ուժերին ու կենտրոնախոյս նախարարներին միաւորող մի հոգեւոր ազդակ, այն է՝ ազգային ինքնաճանաչման բարձր գիտակցականութիւն, հայրենանուէր սիրագործութիւնների արթուն ոգի, որ կարող էր ստեղծուել միայն մայրենի լեզուով գիր ու գրականութիւն ունենալու ճանապարհով: Եւ նա իր ամբողջ կեանքը նուիրեց այդ գաղափարի փայլուն իրականացմանը՝ հիմնադրելով հայոց գրերն ու հայ դպրութիւնը:

Հայ գրերի գիւտը եւ հայկական դպրութեան սկզբնաւորումը մի սովորական, թէկուզեւ համազգային նշանակութիւն ունեցող երեւոյթ չէր եւ ոչ նոյնիսկ սոսկ հոգեւոր ու մշակութային յեղափոխութիւն: Դա հայ ժողովրդի հետագայ ողջ կեանքի, նրա պատմական ճակատագրի համար վճռական նշանակութիւն ունեցող բախտորոշ իրադարձութիւն էր, որի արմատներն ու հիմքերը գալիս էին դարերի անցեալից՝ նախնիներից պատմութիւնից, իսկ ճիւղերն ու պտուղը հասնում են մինչեւ մեր օրերը:

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ

Ուղղագրութեան բոլոր մասնաւոր եւ ընդհանուր կանոնները ցոյց են տալիս, որ Մեսրոպը բազմակողմանիօրէն նկատի է ունեցել մեր լեզուի արտասանական առանձնայատկութիւնները եւ բացառիկ ճշգրտութեամբ կարողացել է որոշել տառերից իւրաքանչիւրի գործածութեան կանոնները:

Նրա ոչ միայն այբուբենը, այլեւ ուղղագրութիւնը բացառիկ ճշգրտութեամբ են արտայայտում հին հայերէնի հնչիւնական համակարգի բոլոր առանձնայատկութիւնները եւ արտակարգ համակարգայնութեան վրայ են հիմնուած: Զարմանալ կարելի է, թէ հինգերորդ դարի այդ գիտնականն ինչպէս է կարողացել այդքան ճշգրիտ, այսպիսի նրբութիւններով, հնչոյթների եւ ենթահնչոյթների, երկբարբառների եւ միաբարբառների այդքան նուրբ տարբերակումներով ստեղծել այբուբենը եւ մի այնպիսի ուղղագրութիւն, որի նկատմամբ ոչ մի դիտողութիւն չի կարելի անել:

Ընդունուած է ասել, թէ ովքեր որեւէ լեզուի այբուբեն են յօրինել, մեծագոյն հնչոյթաբաններ (ֆոնոլոգներ) են եղել. դա ճիշտ է, իհարկէ եւ առաւելագոյն չափով վերաբերում է Մեսրոպ Մաշտոցին: Բայց Մեսրոպը միայն հնչոյթաբան չի եղել. նա եղել է իր Ժամանակի մեծագոյն լեզուաբանը բառիս ամենալայն առումով, որ հիանալի կերպով կարողացել է ուսումնասիրել տարբեր վայրերի խօսուածքները եւ յստակ պատկերացում կազմել հայերէնի ընդհանուր, այսպէս ասած՝ համահայկական հնչիւնական համակարգի մասին, որ խորապէս ուսումնասիրել է մեր լեզուի քերականական կառուցուածքը եւ ուղղագրութեան կանոնները որոշելիս հիմնուել նաեւ քերականական տուեալների վրայ:

Հայոց գրերի յօրինումով, գերազանց ուղղագրական համակարգի ստեղծումով, իր այբուբենի եւ ուղղագրութեան գործնական օգտագործումով Մեսրոպ Մաշտոցը դրսեւորել է իրեն որպէս մեծ գիտնական: Նրա ստեղծած գիրը եւ ուղղագրական համակարգը, իրօք, հանճարեղ մտքի ծնունդ են:

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԿԵԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾԸ

Տակաւին չէր մամուկալել Մաշտոցի գերեզմանը Օշականում, երբ գարնանային մի օր հայ ժողովուրդը Աւարայրի դաշտը նետուեց իր ազգային ինքնութիւնը, իր պատիւն ու գոյութիւնը պաշտպանելու, ընդամենը երկու տասնամեակ առաջ կորցրած իր քաղաքական ինքնուրոյնութիւնը վերականգնելու հաստատ վճռականութեամբ, անձնուրաց խիզախութեամբ, յաղթանակի մեծ հաւատով:

Մինչ այդ, իր պետականութեան ծաղկման օրերին, օտարատիրութեան դէմ ծանր ու հերոսական կռիւներ շատ էր մղել հայ ժողովուրդը, բայց այս մէկը, իրօք, բացառիկ էր, աննախընթաց: Գարնանայորդ Տղմուտի ափին մայիսեան այս ճակատամարտը պետականութիւնից զրկուած, բայց եւ միշտ այդ պետականութեան վերականգնումը տենչացող մեր ժողովրդի առաջին մեծ կռիւն էր, համաժողովրդական մի գօտեմարտ, աշխարհագոր պատերազմ...

Ձկար երկրի տարանջատ ուժերը միաւորող կենտրոնական իշխանութիւնը՝ Արշակունեաց թագաւորութիւնը, Հայոց աշխարհը մասնատուած՝ երկու աշխարհակալ տէրութիւնների մէջ էր բաժանուած, հայրենիքին դաւաճանել, նրա գոյութեան իրաւունքը վաճառել ու թշնամու կողմն էին անցել մի շարք ազդեցիկ նախարարներ, Պարսկաստանի վաղեմի ախոյեանը՝ Բիւզանդիան, տմարդօրէն հրաժարուել էր օգնութեան ձեռք մեկնել դաւանակից հայերին... Ձէր նշմարոււմ փրկութեան որեւէ հեռանկար, անխուսափելի էր թւում կարծես մօտալուտ կործանումը...

Բայց, չնայած այս ամէնին, պարսից հսկայաթիւ բանակների ու մարտական փղերի փաղանգների դէմ ի մահ կռուի ելած ժողովուրդը մարտնչում էր ոգեշնչուած ու անօրինակ քաջութեամբ, զգալով իրեն առաւել հզօր, քան երբեւէ:

Ի՞նչ հրաշք էր դա, ի՞նչն էր արդեօք նոր ուժ ու թափ հաղորդում ժողովուրդին՝ ճակատագրական մարտի պահին:

Այս անգամ արդէն օտարատիրութեան դէմ մաքառող ժողովուրդը սրից ու վահանից բացի ունէր մի նոր, էլ աւելի հզօր զէնք՝ մեսրոպաշունչ գիրն էր դա, Մեսրոպ Մաշտոցի մեծագործութեան շնորհիւ մարմնաւորում ստացած ազգային

ինքնաճանաչման բարձր գիտակցութիւնը, «մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ անմահութիւն է» ոգեշունչ նշանաբանը:

Մերոպ Մաշտոցն էր կարծես յարութիւն առած՝ իր աշակերտների ու գինուորների հետ խիզախ մարտի նետուել Զազկերտի բանակների դէմ, ոգեշնչելով հայրենիքի ազատութեան ու անկախութեան համար ոտքի ելած հայ շինականին ու ռամիկին:



The statue of Sahag and Mesrob at the entrance of Yerevan State University.

Սահակի եւ Մեսրոպի Արձանը Երեւանի Պետական Համալսարանի մուտքին:

ՄԱՇՏՈՑ

Ինչպէս իւրաքանչիւր մարդու, այնպէս էլ իւրաքանչիւր ժողովուրդի հետ պատահում են այնպիսի իրադարձութիւններ, որոնք հետագայ ամբողջ ընթացքում ներգործում են նրանց ճակատագրի վրայ, յաճախ՝ կանխորոշում այն: Դրանք գտած կամ կորստած պահեր են, եւ ճակատագիրն այդ պահերով է կերտւում:

Դ. – Ե. դարերում հայ ժողովուրդի համար եղաւ այդպիսի երկու պահ՝ քրիստոնէութեան ընդունումը եւ գրերի գիտը:

Արարատի շուրջը բուն դրած մի հին ժողովուրդ, որն իր էթնիկական նկարագիրն ունէր եւ իր պատմութիւնը, յայտնուեց բարդ եւ կարծես անել վիճակում: Նրան հետեւում էր մահը: Եւ ահա, ցեղի ընդերքից յառնեցին ուժեր, ներգոյ եւ ինքնակայ, որոնք նրան պատեցին դիմադրողականութեան շերտով: Դա հաւատն էր եւ դպրութիւնը:

Գիրը քայլում է հաւատի հետքերով, կամ՝ հաւատի հետ: Առաջին դէպքում այն սոսկ հաւատի արտայայտչամիջոց է, երկրորդ դէպքում՝ ազգային լծակ:

Մաշտոցի եւ նրա մեծ գործի մասին շատ է գրուել: Կորիւնից մինչեւ Աճառեան եւ միշտ՝ ժամանակին: Եւ թւում է, թէ այլեւս ոչինչ չկայ ասելու, բայց ամէն դար եւ, թերեւս ամէն տասնամեակ այդ իրողութեան մէջ մի նոր բան է տեսնում:

«Իւրաքանչիւր դարաշրջան անմիջական կապի մէջ է Աստծոյ հետ», գրում է Ռանկէն: Այսինքն՝ իւրաքանչիւր դարաշրջան ունի իր դէմքն ու կերպարը:

Եթէ ուզենայինք օգտուել այդ արտայայտութիւնից, ապա հայ ժողովուրդի համար կարելի է ասել. Իւրաքանչիւր դարաշրջան անմիջական կապի մէջ է Մաշտոցի հետ:

Իւրաքանչիւր դարաշրջան իւրովի է ընկալում Մաշտոցին, եւ բոլոր դարաշրջանները նրա հետ կիսում են միեւնոյն խորհուրդը:

Գրերի գիտը ժողովուրդի հետագայ գրեթէ ամբողջ պատմութեան ընթացքում դարձաւ ազգային պահպանութեան լծակ: Ահա թէ ինչու է Մաշտոցի մասին այդքան շատ գրւում: Դրանք տուրք են, որ բերում է իր հետ ամէն մի դարաշրջան եւ միշտ՝ ժամանակին:

ԹՐԻ ԴԷՄ՝ ԳՐԻՉ

Աւարայրի ճակատամարտը, եթէ կ'ողգէք, ըստ էութեան տեղի ունեցաւ ո՛չ թէ 451-ին, ո՛չ թէ Տղմուտ գետակի ափին, այլ մօտաւորապէս կէս դար առաջ, Գողթան գաւառի այն քարանձաւներում, որտեղ Մաշտոցը, իր աշակերտի վկայութեամբ, «տրտում հոգսերով պաշարուած ու թակարդուած՝ մտածմունքների ծովն էր ընկած, թէ ինչպիսի՛ ելք գտնի» իր «եղբայրների եւ ազգակիցների համար»:

Զօրութեամբ ու բազկով Հայաստանը չէր կարող վերականգնել իր միասնութիւնը, ինչպէս նաեւ պետական անկախութիւնը: Անհամեմատ ուժեղ ու գիշատիչ թռչուններին կեր չգառնալու, նրանց դիմադրելու մի գէնք էր մնում. «Ճանաչել զիմաստութիւն եւ գիւրատ, իմանալ զբանս հանճարոյ».– մարմնական ուժի դէմ դնել հոգեկան զօրութիւնը, ահռելի բազուկի դէմ՝ հուժկու միտքը, համընդհանրութեան դէմ՝ ինքնութիւնը, «բաժանեա՛լ գի տիրեսցես»–ի դէմ՝ «Ծանի՛ր զքեզ»–ը...

Մաշտոցն էր այն մարդը, որ եկաւ պատասխանելու մեր ժողովրդի առաջ ծառացած հարցին. «Լինե՞լ, թէ չլինել»: Եւ նա ասաց. «Լինե՛լ»:

Հողմացրիւ արուած մեր հին մշակոյթի տեղ նա սկզբնաւորեց մի նոր մշակոյթ, որ պիտի գլուխ-գործոցներ տար համաշխարհային քաղաքակրթութեանը՝ Զուարթնոցի տեսքով ու Նարեկացու հոգով. Շիրակացու անգէն եւ Համբարձումեանի զինավառ աչքերով, Կոմիտասի ականջով, որ պիտի փոխանցուէր Խաչատրեանին, Թորոս Ռուսլինի մատներով, որ պիտի ժառանգէր Մարտիրոս Սարեանը, Սայաթ Նովայի բարբառով, որ պիտի լեզու դառնար Զարենցի բերանում, Անիով, որ պիտի վերածուէր Երեւանի...

Այդ նա էր, որ մեր անգիր բանարուեստի փլատակների վրայ հիմնադրեց մեր դպրութիւնն ու քերթութիւնը. Գողթան լռեցուած երգիչների տեղ հնչեցրեց մեր հոգեւոր մեղեդին. հեթանոսական անգիտութեան տեղ փռեց գիտութեան հեքիաթական սփռոցը, որի վրայ մեզ պիտի կերակուր տային մեր հոգեւոր մատակարարները՝ Խորենացուց ու Դաւիթ Անյաղթից մինչեւ Տաթեւացի ու Գօշ, մինչեւ Ալիշան ու Նալպանտեան...

Միայն Աստուածաշնչի թարգմանութեամբ, որ յետոյ օտարներից պիտի կոչուի «մայր թարգմանութեանց» կամ «թագուհի թարգմանութեանց», հայոց լեզուն՝ հնդեւրոպական ընտանիքի այդ գաւակը, աղքատ ազգականի իր անմխիթար վիճակից պիտի միանգամայն հասնէր գահերէցութեան իր այն օրինական բարձին, որն այլեւս չպիտի կարողանային խլել նրա արիական գոռոզ ազգակիցները, եւ բազմած իր այդ օրինական բարձին՝ աշխարհի բազմաթիւ ակադեմիաներից ու ճեմարաններից պիտի ընդունէր «հրեշտակ-դեսպան»ներ, որոնք նրա «Տպաւորութիւնների գրքի» մէջ պիտի թողնէին իրենց մեծ անունները՝ Սկրողեր եւ Հիւբշման, Կոնիբեր եւ Մէյէ, Մարկուարտ եւ Մառ...

ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ ԵՒ ՄԵՆՔ

Ահա՛ մարդը իր ժամանակին մէջ:

Իր ժամանակէն դուրս, երբ այսօր մեր նայուածքը կ'իյնայ ներկային վրայ, ուր մեր կեանքը բեմին վրայ է, կարելի չէ չտեսնել Ս. Մեսրոպի դէմքը աւելի պայծառ ու ճառագայթուն այսօրուան մեր սփիւռքահայ կեանքի մտաւորական, մշակութային երեսին հետզհետէ տփուկացող վիճակին մէջ:

Երբ այսօր շատ յաճախ ու քիչ մը ամէնուրեք բուն մարդերու տեղ՝ ցուցադրութիւն մը կայ մարդերու՝ սփռուած հրապարակի ամենէն չքեղ դիրքերու վրայ, երբ զանազան պիտակներ – ի՛նչ նուիրական բառեր – շռայլօրէն կը զարդարեն անունները մարդերու – հոգեւորական, մտաւորական, ուսուցիչ, գրագէտ, արուեստագէտ, հանրային գործիչ, ազգային ժողովական, եւ երբ այս բոլորին յաճախ պակսողը իրաւութեան, վաւերականութեան, լեցունութեան մայր գիծն է, տիրական գոյնը, այսինքն ՄԱՐԴը որպէս ընդհանուր յայտարար բոլորին, Ս. Մեսրոպ, հոգեւորական–մարդը, հոգիի՛ մարդը, յաղթական կոթողի մը նման կը բարձրանայ մեր աչքերուն դիմաց որպէս պատգամաբերը ճշմարտութեան, այսինքն որպէս իրա՛ւ մարդը, ճշնութեան, ծառայութեան եւ խոնարհութեան երբեակ արժանիքներով յաւիտենականացած մարդը:

Ճշմարտութիւնը անոր անձէն եկող, Աւետարանի խորքին վրայ ձեւուած եւ հայու կեանքով միս ու ոսկոր ստացած՝ ուրիշ բան չէ, եթէ ոչ մարմնաւորուած հոգեղինութեան գերագոյն արժէք ունեցող իրողութիւնը. այսինքն՝ այն իմացումը, թէ տիեզերքին մէջ մարդ կոչուած անձը հոգիին էջքն է նիւթին մէջ, նուաճումը անոր, առանց անոր ջնջումին, եւ այդ նուաճումին մէջէն իրագործուող անմահութիւնը: Ահա այս կէտին մէջ կը գտնէ ան իր գերագոյն վախճանը, իր բնութենէն իսկ եկող կոչումին իրականացումը:

Հոս է գաղտնիքը հայ ժողովուրդի պատմութեան սրտառուչ գրաւչութեան եւ գերազանցութեան: Ըսուած է. «Քաղաքը կ'անցնի, բայց անկէ կը մնայ արձանիկը», որովհետեւ կ'աւելցնեմ, արձանը հոգեղինացած նիւթն է, ա՛լ ազատուած անցաւորութեան ահաւոր չարիքէն:

Մարդ ինք իր կեանքը ունի, զայն ընելու համար հանդէս մը այդ ճշմարտութեան: Հայ մարդը, Ս. Մեսրոպի ճարտարապետութեամբ, ըրաւ իր կեանքը այնպէս, որ արձանները միշտ մնացին, երբ քաղաքները հիմնադրուեցան...

Ս. Մեսրոպ, գերագոյն պատգամաբերը այս ճշմարտութեան, այսօր մեզի համար մեր կեանքին մէջ ապրող խիղճ է՝ մեր արարքներուն դիմաց, կշիռ՝ մեր արժէքներուն, արժեքափ՝ մեր գործերուն:

Բայց աւելին՝ հրաւէր է ան իւրաքանչիւր հայ մարդու ըլլալու ինքզինք իր քրիստոնեայ մարդու եւ հայու ազնուագոյն զգացումներուն եւ արժանիքներուն ամբողջական ու գեղեցիկ մարմնաւորումովը կեանքին մէջ, անհատական թէ՛ ազգային մակարդակներու վրայ հաւասարապէս:

Ս. Մեսրոպ երբ առաջին անգամ իր գրիչը շարժեց հայ տառերու գծագրութեամբ, իր հոգին արձագանգ եղաւ աստուածաբարբառ սա խօսքերուն. «Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»: Այս բառերը եղան հիմնաքարը հայ գրականութեան, կեանքի ըմբռնողութեան, աշխարհայեցողութեան: Այդ եղաւ ալֆա-ն ու օմեգա-ն մեր պատմութեան: Այդ է նաեւ լուսեղէն ամպը մեր սփիւռքահայ կեանքի երկինքին վրայ...:

Ամէն հայ մարդ այսօր դժուար կրնայ հնչել այդ հսկայ հազարամեայ հնութեամբ օծուն բառերը, երբ այնքան խորթ, բայց դիւրին օտար բառեր կը յաճախեն իր շուրթերուն հետզհետէ աճող, սերտացող մտերմութեամբ եւ բնականութեան գացող մտահոգիչ ընթացքով մը...: Կայ մէկ բառ բիւրեղեայ հնչեղութեամբ յստակ ու գեղեցիկ, որ հոմանիշն է բոլոր այդ աստուածաշունչ բառերուն, խորհրդանիշը հայ պատմութեան փիլիսոփայութեան, գաղտնիքը հայ կեանքի յաւերժութեան.՝ Սուրբ Մեսրոպ...

Ամէն հայ պէտք է գիտնայ զայն արտասանել յստակութեամբ, ջինջ առդանութեամբ, ուժեղ շէտով, հպարտ այլ գիտակից կեցուածքով եւ մանաւանդ նախանձախնդրութեան քաջ եւ պատասխանատու ոգիով:

Սուրբ բառ է ան: Հոգեկան ազնիւ զգացումով ու երկիւղած յարգանքով պէտք է արտասանել զայն: Հազար հայ բառեր կրնան սառել օր մը հայ շրթերուն վրայ: Բայց պէտք չէ սառի «ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ»ը, բառերուն բառը, հրաշագործ բառը, Արարտեան

գազալժը հայ լեզուին, ձիւնի պէս մաքուր, երկինքին պէս
պայծառ: Սուրբ Մեսրոպ...



The statues of Mashtots and Goriun at the entrance of Matenadaran.
Սաշտոցի եւ Կորիւնի արձանները Մատենադարանի մուտքին:

**Ասույթներ
Հայերէն Լեզուի Մասին**



The alphabet garden in Oshagan.

Այբուբենի պարտեզ, Օշական:

ԾՈՐԾ ՊԱՅՐԸՆ

Երբ 1816-ին Վենետիկ ժամանեցի, միտքս այնպիսի վիճակի մէջ էր, որ պահանջը կը զգայի գործի մը, որ երեւակայութեանս համար քիչ ասպարէզ ձգէր եւ բաւականաչափ դժուարութիւն յարուցէր որոնումներուս մէջ:

... Սկսած եմ եւ կը շարունակեմ ուսումնառութիւնը հայոց լեզուին, որուն կը տիրապետեմ հնարաւորութիւններուս սահմաններուն մէջ: Իմ համոզումով, հայոց լեզուն (որ երկու տեսակ է՝ գրաբար եւ աշխարհաբար) դժուար է, բայց ոչ անյաղթահարելի: Միտքս պէտք է մարզել աւելի խիստ ուսման բնագաւառին մէջ, եւ այս լեզուն, ամենադժուարը ըլլալով ինծի համար, այնպիսի անհրաժեշտութիւն է, ինչպիսին պոչն է օձին համար:

... Իբրեւ հաճելի ժամանց, ամէն օր հայերէն կը սորվիմ հայկական վանքին մէջ: Պարզուեցաւ որ միտքս պայծառացնելու համար պէտքը ունիմ տաժանակիր աշխատանքի մը: Ասիկա ամենադժուար աշխատանքն է, որ հոս կըցայ գտնել իբրեւ ժամանց՝ միտքս տանջահար ընելու եւ կեդրոնանալու համար: Ինչ որ է, ասիկա հարուստ լեզու մըն է եւ սորվողին չարչարանքները լիովին պիտի հատուցուին:

ՎԻՔԹՈՐ ՀԻԻԿՕ

Ձեր հնամենի լեզուն չեմ գիտեր, բայց կը սիրեմ զայն: Անոր մէջ արեւելքն է որ կը զգամ, դարերն է որ կը նշմարեմ եւ կը տեսնեմ անցեալի խորհրդաւոր շողարձակումը: Ինծի համար պարծանք է հայերէն թարգմանուիլը:

ԱՆԱԹՈՒ ՖՐԱՆՍ

Հայերէնը գարնան վարդի պէս գեղեցիկ է եւ հրապուրիչ. կը սիրեմ հայերէնը:

ՖՐԵՏԵՐԻՔ ՖԵՅՏԻ

- Զբաղումներուս գլխաւոր նիւթը այսօր: Մէկն ու միակը՝ հայերէնը. գրաբարը, հայոց բարբառները: Այս է սիրոյս առարկան: Զարմանալիօրէն մասնաւոր շնորհ մը ունեցող այս լեզուն, որ այսօր իսկ գոյութիւն ունի ազատօրէն եւ ստոյգ արտայայտելու համար գիտական խստորոշ միտքը, փիլիսոփայական գաղափարները եւ բանաստեղծական նրբին, բազմերանգ

կիսաստուերները միաժամանակ: Կեանքիս ամէն մէկ վայրկեանը նուիրուած է այդ ուսումնասիրութեան:

... Իմ գիտցած լեզուներուն մէջ հայերէնը բացառիկ է. նախ՝ որպէս զարմանալիօրէն տրամաբանական լեզու, ապա նաեւ՝ իր ճկունութեամբ, նոր բառեր կազմելու դիւրութիւններով:

ԱՆԹՈՒԱՆ ՄԷՅԷ

Հայերէնը ոչ միայն կը հաւասարի եւրոպական լեզուներու, այլ նաեւ կը գերազանցէ զանոնք:

... Յայտնի է որ հայ այբուբենը գլուխգործոց մըն է: Հայ հնչաբանութեան հնչիւններէն իւրաքանչիւրը յատուկ նշանով մը նոթագրուած է եւ համակարգը այնքան լաւ հաստատուած է, որ հայ ազգին հայթայթեց հնչաբանութեան վերջնական արտայայտութիւն մը. արտայայտութիւն, որ պահպանուած է մինչեւ այսօր՝ առանց փոփոխութիւն մը կրելու: Այդ լեզուին ճոխութիւնն ու ճկունութիւնը ուժ մը եղած են հայ ազգին համար:

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՄԱՌ

Հայերէնը, իբր Արարատեան լեզու, կը կոչուի «Աղօթքի լեզու»՝ ան աստուածային ճոխ ու աննման լեզու է:

ՎԱԼԵՐԻ ԲՐԻՒՍՈՎ

Հայերէնը լեզուներու անծանօթ գեղուհին է:

2. ԼՈՈՒԿՈՏԿԱ

Մեսրոպ Մաշտոցի այբուբենն իր ժամանակի ամենակատարեալ հնչիւնաբանուած գիրն է...

ԿԻՄ ԲԱԿՇԻ

Հայ ժողովուրդը գոյատեւեր է այն պատճառով որ թշնամիին դէմ պայքարեր է ո'չ չարութեամբ, ո'չ նենգութեամբ, ո'չ բնաջնջելով ու կոտորելով: Ան գոյատեւեր է, որովհետեւ նոյնիսկ ամենածանր ժամանակներու մէջ չարունակեր է ստեղծել... Կառուցեր է տաճարներ, քաղաքներ: Նոյնիսկ ամենադաժան ժամանակներու մէջ հայերը չեն հրաժարած իրենց լեզուէն, չեն կորսնցուցած հայոց լեզուն:

ԱՆՏՐԷ ՊԻՌՈՎ

Հայոց գիրերը ստեղծեր է հանճարեղ մարդ մը, ստեղծեր է մէկընդմիջտ։ Հայոց գիրերը կատարեալ են։ Այդ մարդը նման է եղեր Աստուծոյ՝ արարչագործութեան օրերուն։ Ստեղծելով տառերը՝ ան գրեր է առաջին նախադասութիւնը. «Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»։ Հայերը մէկուկէս հազարամեակ անփոփոխ պահեր են իրենց գիրը։ Այդ գիրին մէջ ազգին հնութիւնն է, պատմութիւնը, ամբողջիւնն ու ոգին...

ՌՈՊԷՐ ԿՈՏԷԼ

Հայերէնի պէս մայրենի լեզու մը անտեսողները կամ ուրացողները որքան ալ հարուստ ըլլան, ինծի կը թուի, թէ անոնք կերպով մը կ'աղքատանան։

ԵՂԻՇԷ

Յունարէնը մեղմ է, հռովմէական լեզուն՝ հզօր, հոներէնը՝ աստուծոյ, ասորերէնը՝ աղերսական, պարսկերէնը՝ պերճ, ալաներէնը՝ գեղեցկազարդ, գոթերէնը՝ հեգնական, եգիպտերէնը՝ տափալակախօս ու խաւարածայն, հնդկերէնը՝ ճշուողական, հայերէնը՝ քաղցր, որ միաժամանակ կրնայ միւս բոլոր լեզուներու յատկութիւններն ամփոփել իր մէջ։

ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆ

Ուր որ հայրենի երգեր կը լսուին՝ հոն հայրենիքը ողջ է...

ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔ. ՕՐՄԱՆԵԱՆ

Հայերէնի հետ միայն հայերէնը կրնայ մրցիլ։

ԵՐՈՒԱՆԴ ԸԱՀԱԶԻԶ

Շատ լեզուներու իմացութեամբ հպարտանալու իրաւունք չունի ան, եթէ չի գիտեր իր մայրենի լեզուն։

ԽԱՉԱՏՈՒՐ ԱՔՈՎԵԱՆ

Ա'ի, լեզո՛ւն, լեզո՛ւն. լեզու որ չըլի, մարդ ընչի՞^օ նման կըլի։ Մէկ ազգի պահողը, իրար հետ միացնողը լեզուն ա ու հաւատը։ Լեզուդ փոխի՛ր, հաւատդ ուրացի՛ր, էլ ինչո՞վ կարես ասիլ, թէ որ ազգիցն ես։

Ձեզ եմ ասում, ձե՛զ, Հայոց նորահաս երիտասարդք, ձեր անումին մեռնիմ, ձեր արեւին ղուրբա՛ն. տասը լեզու սովորեցե՛ք, ձեր լեզուն, ձեր հաւատը ղայիմ բռնեցե՛ք:

ՄԿՐՏԻՉ ԽՐԻՄԵԱՆ (ՀԱՅՐԻԿ)

Սիրեցե՛ք անարատ Մայր Ս. Կաթողիկէ եկեղեցին: Եկեղեցւոյ հետ փրեցե՛ք եւ հաստատուն պահեցե՛ք ձեր Մայրենի լեզուն, այն երկնապարգեւ լեզուն, որով խօսեցան եւ լացին ձեր Հայրերն ու մայրերը իրենց Հայրենեաց մէջ եւ իրենց եկեղեցւոյ մէջ. նոյնը եւ սրբութեամբ աւանդեցե՛ք ձեր որդւոց եւ ժառանգաց միշտ անմոռաց պահել զայն: Հաստատուն մնացե՛ք ձեր Հայրենի աւանդութեանց. թող նոր աշխարհի կեանքը՝ իր ամէն շքեղութիւններով եւ փայլերով զձեզ Հճրապուրէ՛ս...

ՄԻՍԱՔ ՄԵԾԱՐԵՆՑ

Օգտուինք եւրոպական լեզուներու նորանոր ու թարմ արտայայտութիւններէն, բայց չմոռնանք գրաբարին յուսթի շտեմարաններէն օգտուիլ մանաւանդ: Ինչո՞ւ մեր Հացը գետին ձգենք ու մուրացիկ ուրիշին ետեւէն վազենք:

ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ

Փառք Հայ տառերուն, որոնք անիմանալի խնամիտութեամբ մոգական գրիչներու տակ հաւաքուած՝ Եղիշէին լեզուն ոսկի ըրին, Բագրատունիինը՝ աղամանդ եւ Ալիշանինն ու Հայրիկինը՝ մեղր քաղցրահոս: Հայ լեզուն այդ տառերու սանդխտամատերուն վրայ ոտն առ ոտն բարձրացաւ ամէն դարու ճակատին վրայ, հոն փորագրելու համար անմահութիւնը մեր ժողովուրդին:

ՍԻՐԱՆՈՅՇ

Մեր մայրենի լեզուն ազգային պարտէզի վարդն է. առանց նրա մենք չունենք հրապոյր: Առանց մայրենի լեզուի մենք մեռած ենք:

ԳՐԻԳՈՐ ԶՕՀՐԱՊ

Ժողովուրդն է միայն, որ կը դարբնէ լեզուն կեանքի ամէնօրեայ սալին վրայ... եւ գրական մարդիկ կը հպատակին ժողովուրդի լեզուին եւ ոչ թէ կը տիրեն անոր:

ՁԱՊԻԼ ԵՍԱՅԵԱՆ

Մեր հայրերէն մեզի աւանդուած ժառանգութիւններէն ամէնէն չքեղը, ամէնէն իրականը մեր գեղեցիկ, հարուստ եւ մեծավայելուչ լեզուն է, պէտք է պահպանենք յուզումով, հրայրքով եւ խանդավառութեամբ, ես վստահ եմ, որ կը պաշտպանենք:

ԼԷՕ

Արիւն-աւերանքի դարեր եկան ու գնացին, գահեր հիմնուեցին, գահեր խորտակուեցին, ազգաբնակչութիւնը սպառուելու չափ ջնջուեց, ստրկութեան ամենադաժան լուծեր կրեց իր վզին: Բայց խաւարի ու անէծքների մէջ չէին մարում կենդանութեան կրակները: Դրանք ամէն ժամանակ, ամէն տեղ միեւնոյն կերպարանքն ունէին- Մեսրոպեան գիրը: Մեր հազարամեայ անցեալի այն երկար ճանապարհին, որի վրա փռուած են մեր անհուն տառապանքները, ոչ բանական ունէինք մեր պահպանութեան համար, ոչ ուժ, ոչ էլ դըսի օգնութիւն, այլ մի հատիկ բան միայն- Մեսրոպեան գիրը:

... Մեր ամբողջ պատմութեան ընթացքում սա առաջին մեծ դէպքն է, երբ հայ ժողովուրդը մի ճշմարիտ, նշանաւոր յաղթութիւն տարաւ: Նոյնիսկ եթէ Տիգրանները աւելի սովորական երեւոյթ լինէին մեր պատմութեան մէջ, դարձեալ նրանց յաղթութիւնները չէին կարող համեմատուել այս համեստ վարդապետի գործի հետ:

... Մեսրոպը միայն իր ժամանակը չյեղափոխեց, այլ իր ժամանակի հայութեան ամբողջ անցեալը, ամբողջ ներկան ու ապագան: Մեր պատմութիւնը ուրիշ նոյնանման մեծագործութիւն չունի, չի ճանաչում:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ

Այո՛, մեծ ու հրաշալի էր տեսարանը, երբ Իսրայէլի Մովսէսն իջնում էր Սինայից ու բերում էր հետը Աստծոյ պատգամները, բայց նրանից ոչնչով պակաս վեհ ու վսեմ չէր, երբ հայոց Մեսրոպը ժամանակի լուսաւորութեան հայրենիքից Հայաստան էր մտնում հայոց այբուբենը բերելով իր հետ: Եւ ի զուր չի աւանդութիւնը ասում, թէ՛ աստուածային ձեռքը գրեց էդ այբուբենը ու հղպիտով դրեց մեր գրի ու գրականութեան սկիզբը: Նրանից յետոյ մենք ունեցանք սեփական ազգային դպրոց ու գրականութիւն, որ խաղաղ օրերում ոսկեդար է

ստեղծել մեզ համար, իսկ դժբախտութեան օրերում ճանապարհ է ցոյց տուել մեր ազգին դէպի լաւագոյն ապաստան:

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԵԱՆ

Բաւական չէ ազգասէր եւ հայրենասէր լինելը. պէտք է մի քիչ էլ լեզուասէր լինել, պէտք է սիրել, պաշտել, գգուել հարազատ մօր հարազատ լեզուն: Այս սէրը միայն կը բանայ մեր առջեւ լեզուի անհատնում ճոխութիւնը, նրա նրբութիւնը եւ քաղցրութիւնը:

... Եթէ բոլոր մայրերը այնքան հայրենասէր եւ ազգասէր լինեն, որ իրենց զաւակների հետ մայրենի լեզուով խօսեն, նրանց սրտի մէջ ազգային պատուասիրութիւն ձգեն, հայրենիքի սէր, էլ այնուհետեւ ի՞նչ մահ կարող է սպառնալ մեզ:

ԱԽԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆ

Հայոց լեզուի մէջ մարմնացած է հայ ժողովուրդի հոգին: Ամէն մի բառը նրա հոգու մի կտորն է: Այդ բառերի մէջ են նիւթացած առարկայացած մեր վիշտը, զրկանքները, դառն ու զուարճալի ապրումները, մեր երազները, յոյսերը, իղձերը, սէրը, մեր ողջ ժողովուրդը... Նրա համար ծով արիւն են թափել մեր նախնիները:

... Մայրենի լեզուի բառերը մենք գգում ենք, ապրում, իսկ օտար լեզուինը՝ հասկանում, սովորում, յիշում...

ՎԱՀԱՆ ՏԷՐԵԱՆ

Լեզուն ազգի հոգին է. կենդանի է այդ հոգին, կենդանի է ազգը, կենսունակ է առաջինը, ուրեմն կենսունակ է եւ երկրորդը:

ՍՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆ

- Լեզուն իրօք մի գանձ է, որին չի կարող փոխարինել աշխարհի ոչ մի հարստութիւն: Նա է ուրախութեան պահին բացում մեր սիրտը, իսկ տրտմութեան պահերին նա է սփոփում մեզ: Ուստի իր մայրենի լեզուն վատ իմացողը կէս մարդ է, չիմացողը՝ թշուառ, ծառից ընկած մի տերեւ, որ տատանւում է ամէն մի պատահական քամուց:

- Հայոց աշխարհում Մեսրոպի հնարած գիրը դառնում է ինքնապաշտպանութեան գէնք ու վահան, դառնում է հայ ժողովուրդի յարատեւ գոյութեան երաշխիքը, ապահովում է հայ

Ժողովուրդի ինքնութիւնը, քան այդ կ'ապահովէր անգամ հայկական մի թոյլ պետութիւն՝ առանց ազգային գրի:

ԱՐՇԱԿ ԶՊԱՆԵԱՆ

Ո՛վ մեր լեզուն, հայելի մաքրութեան, գորովի եւ արիութեան, դուն մեր հոգին ու մեր արիւնն ես, դուն մեր զրահն ու մեր փառքն ես:

ՆԱՐ-ԳՈՍ

Հայոց լեզուն, որքան աւելի եմ զբաղւում նրանով, ինձ թւում է ճոխութեան հրաշք եւ ոսկու հանք. որքան մշակում ես՝ այնքան գտնում է եւ շողշողում. որքա՛ն գոյներ ունի եւ արտայայտչական հնարաւորութիւններ...

ՍԵՐՕ ԽԱՆԶԱԿԵԱՆ

Բարբառը գանձ է, նրանից է իսկական գրականութիւնը քաղում լեզուական շատ գոյներ, ստանում զգալի համ ու հոտ: Բարբառում պահպանուած են մեր դասական լեզուի՝ գրաբարի շատ գանձեր: Բարբառը պէտք է լաւ խախալել՝ օգտագործելուց առաջ, որպէսզի օտարամուտ ու խորթ որոմները զտուեն մաքուր, բնիկ հատիկներից:

ՈՒԻԼԻՐ ՍԱՐՈՅԵԱՆ

Հայերէն խօսիլ ես չսորվեցայ՝ մինչեւ որ մեծ մայրս մեր տունը եկաւ ու ամէն առաւօտ երգեց զինուոր Անդրանիկի մասին:

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ

Իբրեւ մօր նայել եւ իբրեւ մօր են պահել իրենց մայրենի լեզուն հայ ժողովրդի մայրասէր եւ մայրախնամ զաւակները՝ սկսած Մաշտոցից ու մեր առաջին թարգմանիչներից մինչեւ... Վարուժան ու Չարենց:

... Մեր լեզուն միայն մեզ չի պատկանում, այլեւ աշխարհին, նա միայն մեր սրբութիւնը չէ, այլեւ մասունքը հանուր մարդկութեան:

... Այո՛, մեր նախնիները մեզ եւ աշխարհին փոքր ժառանգութիւն չեն կտակել: Բայց մենք պէտք է հասկանանք եւ հասկանալով չմոռանանք երբեք, որ մեր ժառանգութեան մեծագոյն գանձը մեր լեզուն է:



The Language Institute of Yerevan, named after Hrachia Ajarian.

Հրաչեայ Աճառեանի անուան Լեզուի Հիմնարկը, Երեւան:

Բանաստեղծություններ



The wonderful letters born of the vision.

Տեսիլքէն ծնած հրաշալի տառերը:

ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԶԱՐԵԱՆ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

Մայրենի՛ լեզու, մայրենի՛ բարբառ,
Ախորժ, ընտանի իմ հոգու համար.
Առաջին դու խօսք, ականջիս հասած,
Դու սիրոյ քաղցրիկ առաջին յօդուած,
Մանկական լեզուիս թոթովանք տըկար,
Հընչում ես իմ մէջ դու միշտ անդադար:

Ո՛հ, ինչպէս պըղտոր էր սըրտիս օրը,
Երբ պանդուխտ էի օտարի տանը,
Եթէ հարկ էր ինձ այլագգի լեզուով
Իմ միտքը յայտնել օտար բառերով,
Որ երբեք սիրել կարելի չէ ինձ,
Որ ձայն ողջունի բնաւ իսկ չեն ինձ:

Գեղեցի՛կ լեզու, հրաշալի՛ լեզու,
Այդ ինչպէս քաղցըր հընչում ես ինձ դու...
Կամիմ աւելի քաջ ծանօթանալ
Քո ճոխ գանձերին, հոգով հայանալ.
Ասես թէ ահա կանչում էին ինձ
Պապեր ու հայրեր խոր գերեզմանից:

Հընչի՛ր դու, հընչի՛ր այժմ եւ յաւիտեան
Մայրենի լեզու, բարբառ սիրական,
Արի՛, բարձրացի՛ր հնութեան փոշուց,
Դու իմ հայ լեզու, մոռացուած վաղուց.
Զգեցիր նոր կեանք սուրբ գրուածքներով,
Որ ամենայն սիրտ վառուի քո սիրով:

* * *

ՎԱՀԱՆ ԹԷՔԷԵԱՆ

ՏԱՂ ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻՆ

Քե՛զ, Հայ Լեզո՛ւ, կը սիրեմ մրգաստանի մը նման...
Մեր անցեալին թանձրախիտ ստուերներուն մէջ՝ կարծես

Մէյ-մէկ պտո՛ւղ՝ քու բոլոր բառերդ ինծի կ'երեւան,
Որոնց մէջէն կը քալեմ ու կը քաղեմ զանոնք ես:

Մրգաստանի մը նման կը սիրեմ քեզ, Հայ լեզո՛ւ...
Մեր հայրենի պալատէն, պարտէզներէն մնացորդ՝
Դալարագեղ դռն պուրա՛կ, որ դիմացար դարերու,
Եւ կը մընաս միշտ առոյգ, հին աւիշովդ կենսայորդ:

Ծառերուդ մէջ հովանուտ կ'երթամ խինդով մ'անսահման,
Արմատներուդ, ճիւղերուդ վրայ նայելով հիացիկ,
Զարմանալով, թէ ինչպէ՛ս դռն մնացիր, երբ սաստիկ
Քամին քու շուրջդ փչեց եւ տապալեց ամէն բան:

Մէյ-մէկ պտուղ գոյնզգոյն՝ ամբողջ բառերդ ահա,
Հիւթեղ բառերդ, զոր որքա՛ն հասունցուցին արեւներ,
Բառերդ, որոնք այս պահուս շրթանցս վրայ եմ բռներ,
Բառերդ, որ քիմքս կ'օծեն եւ կը սփռին սիրտս հիմա...

* * *

ՍԻԱՄԱՆԹՕ

ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

(Հատուածներ)

Ներբողական

Օչականի վսեմական վարդապետ,
Դռն վեհիմաստ վանական եւ Աստծո՛յ բաժակ,
Դռն Յիսուսի բազմաբուրեան պատմուճան,
Խօսքի՛ աղբիւր, բանի՛ բարձունք,
Կարողութեանց անվերջ կատար,
Դռն իմաստի աւագան եւ աղօթքի կապոյտ անձրեւ,
Ափ մը հողէդ ամբողջ երկինք մը դեռ կը բուրէ...

Օչականի մէջ անմա՛հօրէն մահացեալ,
Անճառելի եւ անդրանիկ դաստիարակ,
Շուշանմարմին մանուկներէն՝
Մինչեւ ծերերն հողաբոյր,
Քու Սուրբ անունդ կ'օրհներգեն...
Օչականի հանճարանիստ հողակոյտ,

Եկեղեցւոյ խորանին քով անշուքօրէն մրափող՝
Եւ Եհովայի պատգամախօս մեծ Մատեանին
Դուն սրբագիր թարգմանիչ,
Ոսկեդարու ադամանդեայ՝ բանալի,
Դուն հայ դպրութեանց անշրջանակ լուսամուտ,
Դուն լեզուի կաճառ, գեղեցկութեան իջեւան,
Դուն ճեմարան մարմարային մտածումի...

Սուրբին Աղօթքը

«Լո՛յս տուր ինծի, Աստուած անհերքելի,
Տիեզերքի ամեկնելի ճարտարապետ,
Ճակատագրի եւ ճանաչման տեղծի՛չ,
Շունչի՛ մրրիկ, կեդրոնական կարողութիւն,
Սուրբ սեղանիդ սարկաւազն Մեսրոպ՝
Իր մշուշապատ մեծ երազին՝
Քու ձեռքերէդ յստակութի՛ւնն կ'աղերսէ...

Օգնէ՛ ինծի, անծայրածիր Ծանօթութիւն,
Գերազօր Տէր, անհուն հնարիչ,
Լոյսի գենիթ, անկնճիռ իմաստ,
Ջուր երկնային, անանջրպետ հոգի,
Անհաշիւ բաշխող, երազներու սահանք,
Ճանաչումի քու ծածկոցդ լուսեղեն
Իմ կործանեալ ուսիս վրան թող ծածանի,
Եւ՝ հսկումներու, հեծեծանքի, աղօթքներու
Այս իրիկուան, քառասներորդ գիշերին՝
Աստուա՛ծ անհեղիլի, Աստուա՛ծ անափունք,
Արարչագործ ձեռքդ իմ ուղեղիս երկարէ,
Հոն իմ գիւտս խմորելու...»:

Տեսիլք

Ո՛վ հրաշալիք, ո՛վ հաւատքի աննիւթական հուր,
Ո՛վ զարմանագործ զօրութիւն,
Ո՛վ բոցեղեն բժժանք, ո՛վ անլոյծ խորհուրդ,
Ահաւասիկ Քերովբէ մը՝ մրափին մէջ Մեսրոպին,
Իր աջ ձեռքովն լուսագիծ՝
Ակնթարթ մը՝ մենաստանին որմին վրայ,
Հայկազնեան Այբբենարանը տառագրեց...

Յանկարծ՝ Սուրբը, մեծ Տեսիլքէն ցնորաշարժ,
Մեռեալի մը պէս ընդոստ ոտքի,
Փետուր գրիչն եւ տախտակն ի ձեռին,
Հրաշքին տակ արտասուելով,
Որմին առջեւ անհունօրէն ծնրադրեց...

Գիտիմ Փառքը

Մեսրոպ, հայ դարերուն դիմաց կեցող՝
Դուն ադամանդեայ ապառաժ,
Դուն էիր, որ զքեզ երգող ցեղդ այսօրուան,
Հելլեններէն եւ հանճարեղ եւ հրավառ
Ու աշխարհակալ մեծ Հռովմի որդիներէն,
Ու հրապաշտ պարսիկներէն դրացի,
Մայր-բարբառիդ հիմնաքարովն յակինթ,
Հայկազունեաց մեր շառաւիղն ազատեցիր...
Դուն երկրորդ Աստուած,
Եւ մտածման Դուն առաջին արարիչ...
Ո՛վ մեռակեաց, ո՛վ Մագիստրոս, ահաւասիկ
Երկու Հայքերն «Օվսաննա՛ քեզ» կը գոռան...
Եւ Օվսաննա Վաղարշապատի Հայրապետին՝
Սահակ Պարթեւ զուգակշիռ արբանեակիդ,
Եւ Վռամշապուհ Արքային,
Որովհետեւ քու մեծ գիւտիդ զօրավիզ,
Մէկն իր Խաչին, միւսն իր Սուրին համազօր
Քու քայլերուդ հետ՝ քալելով՝
Արարատեան արշալոյսին,
Դպրութեանց դուռը մեզ բացին...
Ո՛վ անլուծելի առեղծուած,
Ո՛վ ջղերո՛ւ կայծակէ խուրձ,
Արեան հնոց, անուրջներու անբիծ ծաւալ,
Ո՛վ զարմանալի եւ տեւական զգայախաբ,
Եւ այսօր քու սրբութեամբդ սնած՝
Ես ապաժաման քնարահար,
Եւ անվճար ու անարժան երախտագէտ,
Ես՝ քու ցեղիդ հոգիին հայելին քեզ կը բերեմ...
Աչքերուս մէջ անոր աչքէն հուր առի...
Ու իմ խօսքերս անոր սրտէն եմ քաղեր,
Եւ ինչ որ կարդաս ճակատիս վրան,

Ինչ որ կարդաս ժպիտին մէջ,
Անոր Յոյսովն եմ ես գրած...
Եւ թոյլ տուր այսօր, ո՛վ Մեսրոպ,
Որ՝ Հայոց հողէն մինչեւ աստղերը հասնող
Քու ոսկիէ սանդուղէդ վե՛ր բարձրանամ,
Եւ հաստատաքայլ աստիճանէ աստիճան
Ու պսակէ ի պսակ եւ լոյսէ ի լոյս,
Իբր զաւակ մը մտածումիդ,
Ես ի քե՛զ գամ, իմ այս երգս երգելու...

* * *

ԵՂԻՇԷ ԶԱՐԵՆՑ

ՄԵՐ ԼԵԶՈՒՆ

Մեր լեզուն ճկուն է ու բարբարոս,
Առնական է, կոպիտ, բայց միեւնոյն պահին
Պայծառ է նա, որպէս մշտաբորբոք փարոս,
Վառուած հրով անչէջ դարերում հին:—

Եւ վարպետներ, խոնարհ ու հանճարեղ,
Հղկեր են այն դարեր, որպէս մարմար,
Եւ փայլեր է նա մերթ, ինչպէս բիւրեղ,
Մերթ կոպտացել, ինչպէս լեռնային քար:

Բայց միշտ պահել է նա իր կենդանի ոգին,—
Եւ եթէ մենք այսօր կոտրատում ենք այն մերթ—
Այդ նրանից է, որ ուզում ենք մեր
Նոր խոհերի վրայ ծանր չչոքի:—

Այդ նրանից է, որ մեր այսօրուայ ոգուն
Այլեւս չի կարող լինել պատեան
Ո՛չ Տէրեանի բարբառը նրբագոյն,
Ո՛չ Նարեկի մրմունջը մագաղաթեայ:—

Եւ ո՛չ անգամ Լոռու պայծառ երգիչ
Թումանեանի բարբառը գեղջկական,—
Բայց նա կը գայ՝ լեզուն այս երկաթեայ բերքի
Եւ խոհերի այս խո՛ր ու երկրակամ...

Արի՛, եղբայր, փառաբանե՛նք
մեր քաղցրաբառ հայոց լեզուն,
Մեր սրտի ջուր, մեր ձեռքի թուր,
մեր հոգու լար հայոց լեզուն:

Հոսել է նա մեր դարերից,
մեր սարերից ու մեր սրտից,
Արաքսի պէս միշտ կենդանի,
միշտ անսպառ՝ հայոց լեզուն:

Նա առաջին կանչն է եղել
դիւցազնական մեր նախահօր,
Օրօրոցից մեզ փայփայել է
մայրաբար հայոց լեզուն:

Քերթողահայր խորենացուց
մինչեւ Քուչակն ու ձեր ծառան
Տուեր է մեզ երազ ու երգ
եւ ճանապարհ՝ հայոց լեզուն:

Կը մոլորուէր մեր քարաւանն
ամպրոպաշունչ գիշերներին,
Կը կորչէինք, եթէ ճամբին
չբոցկլտար հայոց լեզուն:

Ուրեմըն է՛կ փառաբանենք,
փայլեցնենք թրի նման,
Որ զրնգայ արեւի տակ
յաւէտ պայծառ հայոց լեզուն:

* * *

ՍԻՊԻԼ (ԶԱՊԵԼ ԱՍԱՏՈՒՐ)

ՀԱՅ ԼԵԶՈՒԻՆ

Դո՛ւն առաջին վանկ չրթունքիս, առաջին վանկ իմ հոգւոյս,
Նախկին հնչիւն իմ մանկական լեզուիս հէզ,
Որով լացի ու երգեցի միշտ յուզումներս, իղձս ու յոյս,
Իմ մայրենի քաղցրի՛կ բարբառ, ողջո՛յն քեզ:

Քու բառերէդ արեւէն վառ ու բիւրեղէն ալ վճիտ՝
Իմ հոգւոյս մէջ բոց մը կաթեց մշտակէզ,
Հուր ծարաւ մը անհունութեան, բարւոյն, մեծ ին ճշմարիտ.
Ո՛ր վ մանկութեանս ազնիւ լեզու, կ'օրհնե՛մ քեզ:

Օրհնեա՛լ ըլլան մեր հայրերը, որոնք թէեւ ցիրուցան,
Մուրթ օրերուն՝ մոլորած չոր շիւղին պէս,
Մոռցան իրենց տունն ու տեղը, զաւակներն ին ուրացան,
Իրենց անձն ալ, բայց չը մոռացան երբեք քեզ:

Օրհնեա՛լ ըլլան մեր մայրերը, որոնք ըզքեզ սընուցին,
Իրենց շունչովն ու աղօթքով սրտակէզ:
Խարխուլ, փրլուած կըտուրին տակ, կարօտ պատառ մը հացին,
Գուրգուրանքով պահպանեցին միշտ ըզքեզ:

Թո՛ղ որ ես ալ, մեր հայրերու յետին զաւակը թշուառ,
Սուրբ տաճարիդ ոտքը բերեմ ողջակէզ,
Միշտ տառապած, երբեք չիջած սիրտէս կայծ մը խանդավառ,
Հոգով պաշտեմ ու քընարովս օրհնեմ քեզ:

* * *

ՅԱԿՈԲ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՏՂԱՍ, ԼԵԶՈՒՆ ՀԱՅԱԿԱՆ

Տղա՛ս, լեզուն Հայկական մեր ամրոցն է անառիկ,
Զոր քար առ քար կերտեցին մեր պապերը դիւցազուն,
Կը փշրուին անոր դէմ ամէն քամի, փոթորիկ,
Կ'ըլլան ժայռերն անգամ կաւ իր ճակատին դէմ ցցուն:

Ամէն մէկ բառ հղկելով ու փայլ տալով զտեցին,
Հայոց լեզուն ոսկեշող, մեր պապերը վեհապանծ,
Անկէ զրահ շինելով զայն հագցուցին մեր ազգին,
Որ պահպանէ ան ինքզինք ալիքներու դէմ անսանձ:

Ու կոկելով, կոփելով լեզուն Հայոց քաղցրալար
Մեր հայրերը հանճարեղ զայն դարձուցին երգեհոն,
Երգի, խունկի ծաղկաստան՝ յաւերժական ու դալար,
Կտակեցին զայն մեզի իբրեւ խոստում, փառասօն:

Տղա՛ս, լեզուն Հայկական ժառանգութիւն է շքեղ,
Հարս է աղուոր ու ժպիտ, գեղեցկութիւն է անմեռ,
Զոր իր փառքին հասցուցին գուսանները ամէն տեղ,
Հայաստանէն մինչեւ հոս, հազարանուն այլ ափեր:

Ապրող, աճող մեր ազգին հզօրագօր ձայնն է ան,
Հոգիներու կամուրջն է, սիրոյ շղթան ոսկեկուռ,
Հայրենիքէն երկարող, տղա՛ս, լեզուն Հայկական
Մայրական ձեռք ու գգուանք, նուիրում է եւ համբոյր:

Գալիքները կը մոռնան գուցէ երգերն այս բոլոր,
Խօսիլ լեզուով պապերուդ, հօրդ կտակն է քեզ, որդի՛,
Ու փոխանցէ զայն դուն ալ զաւակներուդ գերթ օրօր,
Իբրեւ զրահ ու ամրոց, հպարտութեան ալ յուռթի:

* * *

ԽԱՉԻԿ ԴԱՇՏԵՆՑ

ՀԱՅՆՐԷՆ

Երգ սփիւռքահայի

Մեր շուրջը լեզուներ նոր ու հին,
Մեր շուրջը խօսում են այլօրէն,
Եկ խօսենք, եղբայր իմ,
Հայերէն:

Կուլ չերթանք այս ահեղ լափումին,
Թոյլ չտանք մեր լեզուն աւերեն,
Եկ խօսենք, մի՛չտ խօսենք
Հայերէն:

Մենք ունենք աշխարհում Մասիս սար,
Այդ սարը գալիս է դարերէն,
Նա անվերջ խօսում է
Հայերէն:

Ձաւակիդ Հայկազեան դպրոց տար,
Եկ գրենք Մեսրոպեան տառերով,
Եկ խօսենք մեր անուշ
Բառերով:

Մեր հանդէպ ապագայ լուսեղէն,
Թող հնչի մեր լեզուն վեհօրէն,
Թող այրուի մեր հոգին
Այդ հրէն:

Մեզ ցրեց մի բազուկ անօրէն,
Թէ կ'ուզես սերունդներ մեզ ներեն,
Մենք հայ ենք, եկ խօսենք
Հայերէն:

Այս օտար աշխարհի ցրտերում
Եկ սիրենք մեր լեզուն ջերմօրէն,
Եկ վառենք ու վառուենք
Հայերէն:

* * *

ՄՈՒՇԵՂ ԻՇԽԱՆ

ՀԱՅ ԼԵԶՈՒՆ ՏՈՒՆՆ Է ՀԱՅՈՒՆ...

Հայ լեզուն տունն է հայուն աշխարհիս չորս ծագերուն,
Ուր կը մտնէ ամէն հայ իբրեւ տանտէր հարազատ,
Կ'ստանայ սէր ու սնունդ, սրտի հպարտ ցնծութիւն,
Եւ բորեանէն ու բուքէն հոն կը մնայ միշտ ազատ:

Քանի՛ դարեր եւ քանի՛ ճարտարապետ հանճարներ
Աշխատեցան անոր տալ վեհութիւն, գեղ ու պերճանք,
Քանի՛ գեղջուկ բանուորներ տքնեցան տիւ եւ գիշեր,
Որոնք թաղուած են հիմա մոռացութեան մութին տակ:

Մշտանորոգ ու միշտ հին՝ ան կը տեւէ դարէ դար,
իր ճրագները՝ միշտ լոյս, իր օջախին հուրը՝ վա՛ռ,
Բարիքներով անսպառ լեցուն ամբարն ու մառան:

Հոն է միայն, որ կրնայ գտնել ամէն հայ կրկին
խաթամուժին մէջ օտար կորսնցուցած իր հոգին,
Անցեալն անհուն եւ ներկան, նոյնիսկ միմի՛ն ապագան...

* * *

ԴԵԻ (ՄԱՐԳԱՐ ՂԱՐԱՔԵԿԵԱՆ)

ԻՄ ԱՆԳԻՆ ԼԵԶՈՒ

Ինչպէ՛ս չսիրեմ ես քեզ, իմ անգի՛ն լեզու,
Երբ ինձ հետ ես թէ՛ արթուն եւ թէ՛ երազում:

Ինչպէ՛ս կարող եմ քո դէմ յոյգերս զսպել,
Երբ ապրում ես դու իմ մէջ թանկ երազիս պէս:

Ինչպէ՛ս շունչդ իմ հոգուն բերկրանք չբերի,
Երբ ծնուած ես դու ինձ հետ, լեզո՛ւ մտերիմ:

Ինչպէ՛ս սիրտս չգերեն բառերդ ոսկի,
Հնչիւնները լուսալար քո թովիչ խօսքի:

Ինչպէ՛ս վճիտ աղբիւրիդ ակը չբանամ,
Որ քո բիւրեղ հոսանքից խմեմ, յագենամ:

Ինչպէ՛ս, ինչպէ՛ս չգովեմ քեզ իմ ջինջ երգերում,
Երբ քո հրաշք խօսքերով երգերդ եմ երգում:

* * *

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԾԻՐԱԶ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒՆ

Մի հայրենադարձ պատանու

Մեսրոպ Մաշտոցն ասաց՝ որդիս,
Ել ինչո՞վ ես յոյսը բերդիս,-

էլ հայրենիք ինչո՞ւ եկար
Թէ պիտ խօսես օտար լեզուով,
Խմես հայոց գինին նեկտար՝
Կենաց կանչես օտար լեզուով:
Քաղես հայոց վարդերն ու հեզ
Աղջիկ կանչես օտար լեզուով:

Իրաւ, քանի լեզու գիտես՝
Այնքան մարդ ես՝ իրաւն ասին,
Բայց որ քո հայ լեզուն չունես,
էլ ի՞նչ յոյս ես քո Մասիսին,
Որ թողել ես քո մայրենին՝
Հարամ է քեզ հայոց գինին,
Հարամ է քեզ աղջիկն հայոց,
Հայոց սիրտը՝ Մասիսն հայոց:

Մեր հայրենիքն էլ ի՞նչ սրտով
Քո ոտքերն էլ գրկէ վարդով...
...Ա՛խ, չէ, Մասիսն հալալ է քեզ,
Հայոց վշտում դու մեղք չունես,
Հալալ է քեզ հողն հայրենի,
Թող քեզ ջուրն էլ դառնայ գինի:
Քանզի հայոց վայ սփիւռքում
Պանդխտութիւնն է դեռ պոկում
Հայ բերանից հայոց լեզուն,
Օտարն՝ հայոց մահն է ուզում...
Բայց նա է հայ, ով յովազի
Արնախում երախումն էլ
Իր մայրենի լեզուով խօսի,
Մօր կաթի հետ ծծած լեզուով
Որ հայ գետը ծով ծնի, ծով,-
Ժխորում էլ Բաբելոնի
Խօսի լեզուով, որ միշտ ջահել,
Մեզ բիւր դարեր հայ է պահել:

* * *

ՄԱՅՐԵՆԻ ԼԵՂՈՒ
(Հատուածներ)

Դու մեր մեծ երթի գալազանակիր
Եւ մեր պատմութեան մեծագոյն դիւան,
Մեր ազնւութեան գովասանագիր,
Մեր մտքի պահեստ, հոգու օթեան:
Անցեալին պարզուած դու մեր լսափող,
Եւ մեր խօսափող՝ գալիքին ուղղուած:
Դու մեր սրբութիւն՝ կնքուած Մեսրոպով,
Նարեկացիով օծուած ու իւղուած:

Շա՛տ բանից է մեզ զրկել թշնամին:
Իր ձեռքով նա մեր ձեռքերն է հատել,
Հատել է ականջ ու ոտնաթաթեր,
Աչքեր է հանել դաշոյնով իր սուր,
Կտրել է նաեւ արմատից լեզուն,
Եւ սակայն... իզո՛ւր.
Զի՛ հատուել լեզուն,
Մնացել է նա՝ հատուելո՛ւյ անգամ...

Քեզ՝ մեր հայկական եւ արամական,
Զկարողացան քեզ խլել մեզնից
Ո՛չ խարդաւանքով արամէական,
Ո՛չ բիւզանդական սիրով անագնիւ,
Ո՛չ Ահրիմանի ահեղ նետերով,
Ո՛չ Քրիստոսի մարդ-չմարդութեամբ,
Ո՛չ Մուհամէդի ճմլիչ ոտերով.
Ո՛չ ճշմարտութեամբ,
Ո՛չ էլ ստերով:

Եւ ի՞նչ խաչագող դեռ պիտի հասնի,
Որ քեզ կամենայ գողանալ մեզնից
(Մի՛ ասա «մեզնից», «աշխարհից» ասա)
Զէ՞ որ դու հիմա ոչ միայն լեզու,
Այլեւ մասո՛ւնք ես,
Մասո՛ւնք ես մի սուրբ,

Անկողոպտելի մասո՛ւնք սրբագան՝
Դարերի խորքից դարերին հասած:

Մասո՞ւնք: Ինչպե՞ս թէ: Մասունքըս ո՛րն է:
Մասունքի տեղը տուփն է կամ հորն է:
Իսկ դո՛ւ դարաւոր, բայց եւ առոյգ ես,
Գիտալոր ծուխ ես, բայց եւ խարոյկ ես,
Ինչքան պարզ՝ նոյնքան ասպետական ես,
Շատերի մէջ ես, բայց պետական ես,
Եւ դրանով իսկ դու պէտքական ես
Այն պետութեանը, որ վաղը պիտի
Լուսնից ու Մարսից ինքն իրեն դիտի...

«ԵՒ ԱՅՐ ՄԻ՝ ՄԱՇՏՈՅ ԱՆՈՒՆ»

(հատուածներ)

Զոհուած արջառի տաքուկ սրտի պէս
Մեր հողն էր կիսուած
Եւ բռնի քաշուած
Երկու շիկացած ու սուր շամփուրի,
Որոնցից մէկը պարսիկն էր բռնել կրակի վրայ,
Միւսը բռնել էր մոմերի վրա նենգ բիւզանդացին:

Մե՛ր հողի վրայ,
Մե՛ր երկնքի տակ
Մենք դարձել էինք օտարի գաղուժ,
Նոյնիսկ մեր հօրը երկրպագելու
Եւ կամ թէ որդուն պագելու համար
Այլ արքունիքից պիտի խնդրէինք մի թոյլտուութիւն,
Որ եթէ հասնէր՝
Պարտաւոր էինք համարել շնորհ
Եւ շնորհակալ մնալ յաւիտեան:
Իրաւունք չկար երգել երգը մեր,
Որ դարեր ի վեր
Հնչել էր լեզուով մեր ոսկեղենիկ՝
Իրաւունք չկար նաեւ նուագել՝
Ո՛չ վինի վրայ,
Ո՛չ էլ բամբիռի:

Եւ ի՞նչ էր մնում:
Այլ բան չէր մնում,
Քան թէ աղօթել:

Եւ այդ պահին էր, որ աշխարհ եկաւ
Նա՛ այր մի՛
Մեսրոպ Մաշտոց անունով:

Ժողովրդի մէջ ննջում են Նրանք,
Ինչպէս ջրի մէջ՝ ահեղ գոլորշին
Նրանք ծնւում են ինչ-որ հանճարեղ մի յոգնութիւնից,
Որպէսզի դառնան հանճարեղութիւն:
Նրանք ծնւում են, որ ապացուցեն,
Թէ վերջը մի տեղ դառնում է սկիզբ:
Նրանք ծնւում են, որ ապացուցեն,
Թէ հրաշք չկա՛յ,
Կա միայն կարի՛ք:
Նրանք ծնւում են, որ ապացուցեն,
Թէ այնտեղ է լոկ սիրանքն սկսում,
Ուր վերջանում է ամէ՛ն մի հնար...

Այսպէս էլ ծնուեց մէկը Նրանցից,
Ծնուեց Նա՛
Այր մի՛ Մաշտոց անունով:
Եւ նա չծնուեց որ աւելացնի
Հարց տուողների քանակն անպակաս:
Նա եկաւ աշխարհ՝ պատասխանելու,
Եւ պատասխանը գտաւ իսկապէս...

Մենք կայինք, այո՛, Նրանից առաջ:
Սակայն Նա ծնուեց,
Որ գայ ու դառնայ ինչ-որ նոր Սկիզբ:
Այո՛, մենք կայինք Նրանից առաջ,
Քիչ թէ չատ՝ կար հաց,
Եւ ունէինք ջուր:
Սակայն Նա ծնուեց, որ Մնո՛ւնդ դառնայ:

Ծնունդ, որ ծնենք,
Եղա՛ւ որ լինե՛նք,
Եւ անմահացա՛ւ,
Որ անմահանա՛նք...

Մեզ սպառնացող վտանգի չափ մեծ
Եւ այդ վտանգից նաեւ ահագին՝
Նա օտար հրի ճարակի դիմաց
Մեր ինքնութիւնը կոփեց ու կռեց,
Դրեց խարդախուած կաթի դէմ՝ մերան,
Քանակի դէմ թեւ,
Թուի դէմ՝ թռիչք,
Արեան դէմ՝ թանաք,
Սրի դէմ՝ գրիչ,
Եւ դարանի դէմ՝ Մատենադարան:

Անվերջ կրելով զարկեր ու հարուած,
Նոյնիսկ յաղթուելով ժանտ բանականերից՝
Ժանտերից ժանտին յաղթեցինք կեանքում-
Յաղթեցինք դաժան ժամանակներին՝
Կանգուն առ կանգուն թաղուելով հողում՝
Յառնեցինք դարձեալ,
Մնացինք կանգուն.
Անվերջ ընկնելով՝
Վերաթեւեցինք.
Մեռնելով անվերջ՝
Գոյատեւեցինք...
Եւ հիմա արդէն այդ մե՛զ չեն պեղում,
Այլ մենք ենք պեղում,
Այդ մե՛զ չեն յիշում,
Այլ մենք ենք յիշում.
Մե՛զ չեն վկայում,
Մենք ենք վկայում՝
Հասնելով ուրիշ ժամանակների,
Երբ մենք՝ տառապած միշտ քանակներից,
Հպարտ ենք արդէն մեր նոր որակով:

Այսքանից յետո ի՞նչ կոչես Նրան՝
Մեր կեռամանաչատ երթուղու վրայ
Մի նշանացի՞ց,
Մի սի՞ւն
Կամ թէ՛ ձո՞ղ,
Ինչ-որ գրերի ինչ-որ ստեղծո՞ղ:

Ու եթէ պիտի գիր ու տառ յիշուի,
Ապա Նա ինքն է այն մեծատառը,
Որով հասարակ ու պարզուկ բառը
Աճում է-հասնում խորհրդանշի,
Եւ... մարդը ձգւում ու դառնում է Մարդ,
Իսկ հայը՝... Մաշտոց:

* * *

ՎԱՀԱԳՆ ԴԱԻԹԵԱՆ

ՀԱՅՈՅ ԼԵԶՈՒ

Իմ մայրենի, իմ բարբառ, կրակի՛ հետ արարել,
Կրակի պէս սրբազան քեզ դարեր եմ տարել:

Վառել եմ բոցը քո շէկ ես եղեգան փողն ի վեր,
Որ աստուածներ դու ծնես՝ բոցամօրուս ու հուրհեր:

Եւ մայրենի կաւածեփ խուղերում եմ վառել քեզ,
Որ ծխանի ծխի հետ յաւերժօրէն երկարես...

Իմ մայրենի, իմ բարբառ, քեզ հացի՛ հետ արարել
Եւ հացի պէս սրբազան քեզ դարեր եմ տարել:

Քարից քամած ցորեանիս համն ու հոտն եմ տուել քեզ,
Որ անապառ լինես դու այն օրհնուած հացի պէս:

Որ հեռավոր ճամբէքին՝ օտարութեան ու քաղցի,
Դու շուրթերիս մերձենաս հաղորդութեան պէս հացի:

Իմ մայրենի, իմ բարբառ, քեզ գինո՛ւ հետ արարել
Եւ գինու պէս սրբազան քեզ դարեր եմ տարել:

Ու քեզանով արբեցած, դարձել տրտունջ ու բողոք,
Ծառս եմ եղել երկնքի գահերի դեմ անողոք:

Ես քեզանով իմ հոգու լոյսն ու խաւարն եմ հունցել
Ու կապոյտի, անյայտի, յաւերժի հետ զրուցել:

Իմ մայրենի, իմ բարբառ, աշխարհում ինչ էլ լինի՝
Դու իմ կրակ, դու իմ հաց, դու սրբազան իմ գինի...

ՄԵՐ ՏԱՌԵՐԸ

Տեսիլքից են ծնուել տառերը մեր,
Հողմերով են սնուել տառերը մեր,
Ջրդեղուկ են, դարձել երկաթագիր,
Քարերին են գրուել տառերը մեր,
Երբ փորձել են ջնջել ու եղծանել,
Կայծակին են տուել տառերը մեր...

* * *

ԳԷՈՐԳ ԷՄԻՆ

ՄԵՐ ԱՅՌՈՒԲԵՆԸ

Այբուբենն չէ սա՝
Բերդ է անմատոյց,
Գանձ է աննուաճ՝
Դուռ է փրկութեան,
Ելք, երբ յոյս չկայ,
Զարթօնքի նուազ:
Էութիւնն է մեր,
Ընթացքն ու ուղին,
Թագ ու զօրավար.
Ժողովող մի կանչ,
Իմաստուն խորհուրդ,
Լինելու հնար:
Խարիսխը նաւի,
Ծառը դպրութեան,
Կնիքն ինքնութեան,

Հացն հանապազօր
 հայի սեղանի,
 Զիրքերի հնձան:
 Ղօղանջը երգի,
 դեկը ընթացքի,
 Ճեմարան ճառի,
 Մարգարան մտքի,
 Մատեան հավատքի,
 Իւղ՝ անմար ջահի:
 Նախահիմքն է մեր,
 Շողը մեր յոյսի,
 Ոգին մեր ճարտար՝
 Զինարին այգու,
 Պարիսպը մեր տան,
 Զրադացն արդար...
 Ռումբն է մեր ռազմի,
 ռունգը բնազդի,
 ռահվիրան փառքի,
 Սէրն ու սիրտն է մեր,
 սերմը միշտ ծլող,
 Վէժ ու վիմագիր:
 Տունը ցամաքում,
 տապանը ջրում,
 Րոպէն սլացքում.
 Յորեանը արտում,
 Ուղին անյայտում,
 Փառքը սխրանքում:
 Քիստն ու քաղն է մեր,
 քանքար ու քնար,
 քարաւան ու ափ.
 Եւ
 Օջախն անմար,
 օժիտն անհատնում,
 Ֆէ-ից մինչեւ Այբ:

* * *

ՀԱՄՕ ՍԱՀԵԱՆ

ՄԵՐ ԼԵԶՈՒՆ

Մեր լեզուն մեր խիղճն է դա,
Սուրբ հացը մեր սեղանի,
Մեր հոգու կանչն է արդար
Ու համը մեր բերանի:

Մեր լեզուն ծուխն է մեր տան,
Մեր կշիռն աշխարհի մէջ,
Նա աղն է մեր ինքնութեան,
Էութեան խորհուրդը մեծ:

Մեր լեզուն արիւնն է մեր,
Արիւնից աւելի թանկ,
Մեր բուրմունքն ու գոյնն է մեր,
Մեր լեզուն մենք ենք ու կանք:

Նա պիտի մեր առաջին
Ու վերջին սէրը լինի,
Ի՞նչ ունենք էլ աշխարհում,
Որ այսքան մերը լինի:

* * *

ՀԱՅՈՅ ԼԵԶՈՒ

(Հատուած)

Քեզանով է պայթել հունդը մեր գոյութեան,
Քեզանով ենք դարձել սուն ու երկիր,
Շառաչել ես դու հին հողում Արարատեան
Մինչեւ հնչիւնը քո դարձել է գիր:

Դու ոգին ես եղել մեր եղեգան փողի,
Ոգու կանչն ես եղել մեր պայքարող...
Կարող էինք ապրել անգամ առանց հողի,
Բայց առանց քեզ ապրել չէինք կարող:

Քեզանով են խօսել սեպուհներն ու արքան,
Շինականն է խօսել յոգնած ու հեզ՝
Ձեղեալ իր աստծոյ, իր սրտի եւ անգամ
Իր տանջանքի լծորդ լծկանի հետ:

Դու մեր անցած բոլոր ուղիներում մի՛թար,
Ե՛ւ զրահ ես եղել ե՛ւ զօրավիգ,
Մարմնաւորել ես դու մեր գաղափարն արդար,
Դարձել Յասման Մհեր, Թլոր Դաւիթ:

Մերթ հնչել ես որպէս կռուի կանչող շեփոր,
Մերթ հառաչել որպէս սիրտը ցաւոտ,
Հեքիաթներ ես հիւսել, առասպել ու էպոս,
Ողբերգութեան մատեան, ասք ու աղօթք:

Հինաւորաց ու նորոգ դու իմ հայոց լեզու,
Դու աւելի փարթամ պիտի ծաղկես,
Երբ մեր երազն անգամ հայերէն է հիւսւում,
Էլ կարո՞ղ ենք ապրել մենք առանց քեզ:

Ոչ մի մրրիկ ու հողմ մեզնից քեզ չի պոկի,
Եւ քեզ չի խափանի ոչ մի աղէտ,
Մեր գոյութեան արեւ, մեր ինքնութեան ոգի
Յաւիտենից ի վեր եւ առյաւէտ:

* * *

ՍԻՆՎԱ ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆ

ԽՕՍՔ ԻՄ ՈՐԳՈՒՆ

Այս գարնան հետ, այս ծաղկունքի,
Այս թռչնակի, այս առուակի,
Հետն այս երգի ու զարթօնքի
Բացուեց լեզո՛ւն իմ մանկիկի:
Ու թոթովեց բառ մի անգին
Հայկեան լեզուից մեր սրբազան,
Ասես մասունք հաղորդութեան
Դիպաւ մանկանըս շրթունքին...
-Լսիր, որդիս, պատգամ որպէս

Սիրող քո մօր խօսքը սրտանց,
 Այսօրուանից յանձնում եմ քեզ
 Հայոց լեզու՛ն հազարադանձ:
 Կտրել է նա, հանց աստղալոյս,
 Երկինքները ժամանակի,
 Շառաչել է խռովայոյց
 Սլացքի հետ հայկեան նետի,
 Եւ Մեսրոպի սուրբ հանճարով
 Դարձել է գիր ու մագաղաթ,
 Դարձել է յո՛յս, դարձել դրօ՛շ,
 Պահել երթը մեր՝ անաղարտ...
 Նրանով է մրմնջացել
 Հայ պանդուխտը վէրքն իր սրտի,
 Նրանո՛վ է որոտացել
 Կռուի երգն իմ ժողովրդի,
 Նրանով է մայրս ջահել
 Ինձ օրօրոց դրել մի օր,
 Հիմա եկել քե՛զ է հասել
 Նրա կարկաչը դարաւոր...
 Բա՛ց շուրթերդ, խօսի՛ր, անգի՛ն,
 Ժիր դայլայլի՛ր, ի՛մ սիրասուն.
 Թող մանկանա՛յ քո շուրթերին
 Մեր ալեհե՛ր հայոց լեզուն...
 Պահի՛ր նրան բարձր ու վճիտ,
 Արարատի սուրբ ձիւնի պէս,
 Պահի՛ր նրան սրտիդ մօտիկ,
 Քո պապերի աճիւնի պէս,
 Ու ոսոխի զարկիցը սեւ
 Դու պաշտպանի՛ր կրծքով նրան,
 Ինչպէս մօ՛րըդ կը պաշտպանես,
 Թէ սո՛ւր քաշեն մօրըդ վրայ.
 Ու տե՛ս, որդիս, ո՛ւր էլ լինես,
 Այս լուսնի տակ ո՛ւր էլ գնաս,
 Թէ մօ՛րըդ անգամ մտքից հանես,
 Քո մա՛յր լեզուն չմոռանա՛ս...

* * *

Մեսրոպ,

*Արարատեան ժայռի ճարտա՛ր քարակոփ,
Որ ե՛րգ քաղեց քնարի պէս քարերէն.
Եւ հայկազեան լեզուի ճշգրի՛տ բառակոփ,
Որ լո՛յս փրցուց բիւրեղի պէս բառերէն:*

Մեսրոպ,

*Արմենական հանճար ճեղքող բերրի՛ խոփ,
Որ դալարի՛ ալլակերպեց քարը մերկ.
Եւ հայ դարերն հերկող գըրի՛չ քառատրոփ,
Որ աստղերո՛վ բեղմնաւորեց էջը լերկ:*

Մեսրոպ,

*Փոթորիկի՛ անուն, լոյսի՛ դուն ամպրոպ,
Որ բոցերը մուծին մարեց, մոխրացո՛ւց՝
Հայ Ոգի՛ի՛ դարբին, բազո՛ւկ հրաբորբ,
Որ հաւատքի դողդոջ ամրոցն ամրացուց:*

Մեսրոպ,

*Օշականի քունին մէջ դեռ արթո՛ւն կոպ,
Որ կը հսկէ լամբերուն վրայ Հայ Մտքին՝
Լուսաւորչի աստղին անմա՛շ լուսամփոփ,
Որ կը պահէ աշխարհացի՛ր Հայ Հոգին,*

Ո՛վ Սուրբ Մեսրոպ,

Ոսկի ողջո՛յն քեզ, հայ Բանի ո՛վ ամպրոպ...:



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA (EASTERN)

Առաջնորդութիւն Հայոց Ամերիկայի Արեւելեան Թեմի

630 Second Avenue, New York City / www.armenianchurch.net